

Հ. Յ. Հ.
ՄԱՍԻՆ ԴԻԱՐ

ՀԱՅՈՒՆ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1904

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménie.

ԴՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՊԵՓՈՐՄՆԵՐՈՒ ՊԱՀԱՀԱԿԱՆ ՀԱՅԱՀԱՅԱԿԱՆ ԴՐՈՇԱԿ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԵՐԵՖ ՄԵԺ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԻՒՊԱՑՈՍՆԵՐՈՒ

Յուլիս 5/18-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Տարօնոյ և Սամնոյ Կեդրոսական հօմիտէները գրաւոր կերպով, երեք մեծ պետութիւններու հիւպատուններուն ներկայացուցիչն այն գլխաւոր պահանջները, որոնց գործադրութիւնը անհրաժեշտ է, իբրև տարրական պայմանները, գելթ մասնակի խաղաղութիւն հաստատելու հայաբնական անհանգներու և յատկապէս այն գաւառներու մեջ որ վերջին ակնաները, ընդհարման և կուի բեմ դարձած էին: Ահա այդ յեղափոխական պահանջներու առաջ տառ ո՞ն ա գիրը իր ամբողջութեամբ:

ՊԱՀԱՆՁՆԵՐ. —

(ա) Բոլոր բացառիկ ու ժամանակաւոր հարկերուն ոչնչացումը: Գանձելիք այլազան տուրքերու փոխարէն իւրաքանչիւր ընտանիքի համար հողային կալածներու համեմատութեամբ միանւագ տուրքի մը հաստատումը: Ծնծումն տաստանորդական վարձակալութեան (աշար իւթիղամը), որ բանաբարութիւն մըն է հողագործի արդար վաստակներուն:

(բ) Տասը տարւան համար հարկերէ ազատում՝ հայերու տնտեսական քայլայտեալ վիճակը վերականգնելու համար: Ապառիկներու բաշխումը: Զօլքեր, ոստիկաններ ու կառավարական պաշտօնեաններ չգործածել տուրքերը հաւաքելու: Ցեղական եկամուտը գործածել տեղական տնտեսական պէտքերուն:

(գ) Ջնշել զինւորական տուրքը և անոր փոխարէն հաստատել ընդհանուր զինւորագրութիւն, Հայ զինւորներէն կազմելով առանձին գնդեր:

(դ) Գիւղային ազգաբնակութեան խաղաղ կենցաղավարութեանը համար իւրաքանչիւրի բնակչութեան թւին համաձայն 5-10 պահապաններու նշանակումը, որտնք պէտք է զինւած ըլլան արագածիդ հրացաններով:

(ե) Ջնշել զէնք կրելու իրաւունքը իսլամական տարրերու համար, որոնք զայն կը գործածեն խաղաղ ժողովուրդը կեղեցելու և փեացնելու հակառակ պարագայի մէջ ամէն կարգի հպատակներու: Համար արտօնութիւն զէնք կրելու և հաւասարապէս ազատ ըլլալ ինքնապաշտպանութեան իրաւունքին մէջ:

(զ) Վերադարձումն հայոց այն բոլոր հողերուն, զորս իսլամներու խուժանը կամ կառավարութիւնը գրաւերէ է հայերէն՝ ուսութերբուկան պատերազմէն վերջ թէ բըռնութեամբ և թէ զանազան էնթրիբներով: Վերադարձումը հայ եկեղեցելոյ այն ներկան վարերուն՝ դարաւոր ու խատահեղիներու, տաճարներու, վեհարաններու, գերեզմանատներու և լն, որոնք հակառակ իրենց ներկան նութեան, գրաւուեր են այս կամ այն թիւրք աղաներէ կամ քիւրդ պէյերէ և լն:

(է) Վերահաստատումն սահմանադրական կարգերու: Գաւանանքներու կատարեալ ազատութիւն և հաւասարութիւն: Հայ եկեղեցւոյ նախկին առանձնաշնորհն մանց պահպանումը՝ գարողներու, եկեղեցիներու շինութեանց և բարեկարգութեանց համար: Կատարեալ թոյլտութիւն հայ ուխտավորութեան՝ իրենց ազգային վանքերու և սրբութիւններու: Տեղական մամուլի հաստատութիւն:

(ը) Ազատ իրաւունք անցագրի, առևետուրի, վաճառականութեան, տեղափոխութեան և լն:

(թ) Դատաստանական բարենրոգութեան որով ապահովէին ազգաբնակութեան ամէն գասերու իրաւունքներն և կատարեալ հաւասարութեան ապահովութիւնը:

(ժ) Բոլոր հայ գաղղթականներուն և պանդուխտներուն (օսմ. հողերէ և թէ արտօսահմանէ) վերադարձումը: Կատարեալ իրաւունք իրենց հայրենի հողերուն տիրելու: Վերադարձումն կիմատած իրաւունքներու:

(ժա) Ազատութիւն բոլոր քաղաքական հայ բանտարկեալներու և ամբաստանեալներու և լն:

(ժբ) Իրենց չարագործութիւնները սանձարձակ ի գործ դնող քիւրդ հեծելազորաց արդի աւերիչ կացութեան զնութեամբ կամ բարեփոխումը: Արգիլել իսպատ որ վրանակ քիւրդեր ամարանոցի պատրւակով հայոց պատկանած լեռները չինեն, սովորութիւն մը, որ չնշանած էր 94-ի գէպէն վերջ իրադէններով սակայն Սասնոյ կառավարութեանէ թոյլատրւած է ի վեսս հայերուն, միջզեր իսեղ ժողովուրդը զրկած է իր ամարանոցներէն օգտաելէ:

(ժգ) Կառավարչարչապետի մը նշանակումը հայկական վեց նահանգներու համար՝ եւրոպական մեծ պետութեանց հսկողութեան տակի որ պիտի կառավարէ ազգաբնակութեան կողմէ լնտերած խորհրդին աշակեցութեամբ: Կառավարիչը պէտք է որ քրիստոնեայ ըլլայ:

(ժդ) Եւրոպական իսխա հսկողութիւն (կօնտրօլ) վեց նահանգներու վարչութեան վրայ:

(ժե) Ազգաբնակութեան թիւ համեմատ կազմակերպել

ժանդարմներ, որոնց մէջ պէտք է լինին քրիստոնեայ պաշտօնեաներ, այն է եւրոպացի սպաներ, և որոնց վերա-Հսկողութեան տակ դրսի ժանդարմների կազմը:

ԺՊ Ընդհանուր հատուցում Սասունի և Մշոյ դաշտի հայոց ֆլաներուն. գիշերուն վերականգնումը. անոնց տուներուն շինութիւնը, տարեկան ուտեստի, զգեստի,

Այս պահանջագրին հետ միասին յանձնած է մանրամասն նկարագրութիւնն այն տառապանքներու, որնց ենթակայ է հայ տարրը՝ թիւրք կառավարութեան կողմէ շարունակ ի գործ դրող զեղծութերու. և չարիքներու պատճուռով:

Այս չարիքներուն դարման տանելու համար էր որ հայ յեղափոխութիւնը պարզեց իր դրօշը և հրապարակ ելաւ չարչարած ժողովրդի իրաւունքը պաշտպանելու. և պահանջելու բարենորոգումներու իրագործումը՝ հայկական վեց նահանգներու մէջ:

Դաշնակցական միենոյն կօմիտէներու ուրիշ ծանուցագիր մ'ես յանձնած են հիւպատոսներուն, որով աղդուօքն բողոքելով Սասունի մէջ զօրանոցներ շինելու գէմ, պահանջած են կառուցման արգելումը, սպառնալով հակառակ պարագային նոր ուժերով դէպբերի վերսկսումը:

Հիւպատոսները այդ բողոքագիրը ուղարկած են գեսպաններուն:

Տ Ե Ր Ո Ւ Լ Ռ Ո Ւ Խ Ա Վ Տ Ա Ն Ո Ւ Մ

— 30 —

Երբ 1866 թւին, Ա. Պետերբուրգի մէջ որոտաց կարակօզի ատրանակը Ալէքսանդր Լ-ի գէմ, ուսւ տէորական կազմակերպութիւնը, տարւած մօտալուտ յաղթանակի երազներով, հազիւ թէ կարող էր մտածել, թէ քառասուն տարուց յետոյ ևս պիտի շարունակւէր անհատական տէորի սիստեմը, Հիմնւած միենոյն փաստերի հողի վրայ, ուղղած հայրենիքի դաշնաների գէմ և ջատագոված նոյնպիսի անվեհեր մարտնչողներից:

Վարդագոյն երազները շատ շուտ չքացան, և այսօր, համարեա քառասուն տարի անցնելուց յետոյ, մենք գեռ գտնւում ենք տէորիստական դաւադրութիւնների մի տենդուտ շրջանում: Ժամանակը չփոխեց կուսի տակտիկան:

Բոնակալութեան մերենան անընդհատ նորոգւեց, կատարելագործւեց: Քառասուն տարւայ ընթացքում միապետութիւնը ասես ուրիշ հոգու չունեցաւ: Պատմութիւնից չէր նա ուսանում, այլ միայն ասիական վայրենութիւնից Վիթիսարի երկրի վիթիսարի պահանջներով չէր նա տուգորւած, այլ միայն նրանով՝ թէ ինչպէս պահպանել թագաւորող տունը, ինչպէս յաւերժացնել տիրող ուժիմը, ինչպէս ապահովել նրա ներկայացուցիչներին՝ “նիշիլիզմ” շանթերից...

Եւ միշտ աւելի արմատացաւ տիրող շրջաններում վաղեմի դաւանանքը՝ որ բոնի ուժը միակ միջոցն է այդ գերագոյն պահանջների հանդէպ: Տագնապի բոպէին ամէն անգամ: Հրապարակ էր կոչւում մի նեղակի գէմք, ամէնավոր՝ մի մինիստր, որը գալիս էր լինակատար սպառազինութեան մէջ և ստանձնում էր դիկտատորի գեր: Կարակօզի հարւածը ՅԱ-ական թիւրին ասպարէզ կոչեց տիրահամբաւ Մուռու ավագի ովին, որը կազմակերպեց մի անօրինակ ու էակցիա: Կախաղաններ, անվերջ հալածանքներ, բերդարդելութիւններ: Մի

տնական պէտքերու, գոյքերու հոգացում՝ ևլի, ինչպէս և հողային և մշակական գործիքներ:

Ի դիմաց Տարօմոյ-Սամսոյ կեղը. կօմիտէներու:

ԱՆԴՐԱՆԻԿ, ՍԱՐԻԱՑ, ՏԱՐԾՆԵՑ:

(ԿԱՐԱԳՈՅԻ)

Կատարեալ որսակուճապ՝ ուղղած ոչ միայն յեղափոխական տարրի, այլև ամբողջ ազատամիտ հասարակութեան դէմ: Եւ գերեզմանական խաղաղութիւնը տիրեց Պետերբուրգից մինչև Վարշաւա:

Յեղափոխական զօրքը աճեց զուգընթացաբար: Մի տասն տարի յետոյ տէորը նորից գլուխ բարձրացրեց, յանձին հոչակաւոր նարոգնայա Վոլիա“-ի, և քաղաքական սպանութիւնների շարքը պասկեց 1881-ի մարտ 1-ի շառաչուն գործողութեամբ: Ուումբը պայմենց, ահարկու որոտումով, միենոյն Պետերբուրգում, և ոդը ցնդեցրեց միենոյն կայսրին, որից վրիպել էր Կարակօզի գնդակը:

Ուեակցիան նորից հնչեցրեց ահազանգը և նորից նետւեց իր զոհի վրայ, մի այնպիսի մոլեգնութեամբ, որպիսին չէր տեսնած թերեւ նոյնիսկ Մուրավիովի օրով: Պօր ե դ օ ն օ ս ց ե վ աւելի բախտաւոր եղաւ իր նախորդներից: Նա հնձեց մի ամբողջ սերունդ և ապահովեց ախաղաղութիւնը՝ ամբողջ քսան տարով...

Խոր, անողորմ հիասթափութիւն տիրեց հասարակութեան բոլոր խաւերին: Տեւորը վիճեց, ոսահմանդրութեան՝ մասին տածւած յորսերը ի գերև ելան: Պերօվսկայաների ու ծելիարօվների մեծ յիշատակը յաւետ արձանագրւեց ուսւ մտածող երիտասարդութեան սրտում, բայց տէորիստի հմալքը հետզետէ նւազեց, „նիշիլիզմ“ չքացաւ ասպարէզից: Նրա տեղը բռնեց այսպէս կոչւած „մասսայական“ գործունէութիւնը, որի մենաշնորհը ստանձնեց Սօցիալ-դէմոկրատիան: Մի գործունէութիւն, որ ունէր իր մեծ արժանաւորութիւնները — յամառ ու յարատէ պրօպագանդ և կազմակերպութ բանւորական ուժերի, յանուն ապագայ յեղափոխութեան — բայց մի գործունէութիւն, որը այլևս չէր ներշնչում իշխողներին վաղեմի սարսափը, քանի որ մերժում էր տէորն ու դաւադրութիւնը:

Սակայն տարօրինակ են հասարակական զարդացման

ելևէջները — տէոօրական գործունէութեանը վիճակւած էր քսան տարւայ մեռելութիւնից յետոյ՝ վերստին յառութիւն առնել:

Գիտակից տարբերը աճում էին Ռուսաստանի մէջ և դրա հետ միասին՝ միշտ աւելի և աւելի զգալի էր դառնում հակա ասութիւնը քաղաքակրթական պահանջների և երկրի պետական կազմակերպութեան միջև:

Ռուսանողական խոռոչութիւնները ներկայ դարու արշալոյսին եկան ազգարարելու այդ սուր հակասութիւնը և խզելու ըմբոստութեան երկարաւու զինադուլը: Կառավարութիւնը պատասխանեց այդ խոռոչութիւններին ամենավյարենի կարգադրութիւններով չտեսնած նոյնիսկ Ռուսաստանի մէջ: Եւ ահա շատ չանցած՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստր՝ Բ օ գ օ լ է պ ո վ սպանւեց տէոօրիստ Կարպօվիչի ձեռքով: Դրանով վերսկսւեց տէոօրի տակտիկը և հին, պանծալի „Նարօդնայա Վօլիա“-ն վերակենդանացաւ—աւելի ընդարձակ, սօցիալիստական-մարտական ծրագրով — յանձնն Ս օ ց ի աւ լ ի ս տ-յ ե զ ա փ ո խ ա կ ա ն կ ո ւ ս ա կ ց ո ւ թ ե ա ն: Պայմանները նպաստաւոր էին: Միապետութիւնը, աւելի քան երբեցէ, վստահ իր ուժերի վրայ՝ չէր վարանում ամենավյարագ միջոցների առաջ խեղելու համար հակապետական ամենաթոյլ արտայատութիւնները: Քանւոր աշխարհը փոթորկում էր, ըմբոստութեան ալիքը գրոհ էր տալիս գէպի գիւղերը.—և ամէն տեղ, Ռուսաստանի մէկ ծալրից միւսը, Տրացանն ու նագայ կան անպատիժ տարածում էին արիւն ու ցասում: Ռուսական տրամադրութիւնը աճում էր թափերով և Սոցիալ-դէմօկրատիայի պաշտպանած դիմադրութեան թէօրիան գոհացում չէր տալիս: Պէտք էր—գէթ երբեմն—արտայայտիչ լինել ժողովրդական արդար ցասումի: Պէտք էր շանթահարել այնքան արիւնի և սարսափների պատասխանատուններին: . . .

Եւ տէոօրը վերստին ստացաւ քաղաքացիութիւն: Նա այժմ ընդգրկեց աւելի լայն խաւեր և ընդունեց քրօնիկական ընորդի: Կարպօվիչն յաջորդեց Բալմաշով, որի հարւածից շնչառապառ ընկաւ մինիստր Ս ի պ ի ա գ ի ն: Հետեւեց մի փայլուն շարք հերոս-մարտիկների, որոնք երկրի այլևայլ կէտերում փորձեր արին ուրիշ դահիճների դէմ, ումանց սպանեցին — Բ օ գ գ ա ն ո վ ի չ և լ ն — ուրիշներին վերաւորեցին, ահաբեկեցին — Ֆ օ ն վ ա լ Օ բ օ լ ե ն ս կ ի, Պ օ բ ե գ ո ն օ ս ց ե վ . . .

*

Պէտքիան խելագար էր իր անզօր կատաղութեան մէջ: Ցարը և „կամարիլլան“, գլուխները կորցրած, աջ ու ձախ էին նետառու, գտնելու համար ամենակարող մարդուն, որը աջողէր փրկել միապետութիւնը:

Եւ մարդը գտնեւց, — դա ֆ օ ն Պ լ է վ է ն էր: Մի գարշելի, մի դժնդակ անոն: Մուրավիօվի, Պօբեդոնօսելի պէս՝ նա ևս ստանձնեց դիկտատորի պաշտօն և, կարելի է ասել, գերազանցեց երկուսին էլ: Դիկտատոր՝

Մետերնիխեան աշխարհայեացրով ու հնարագիտութեամբ՝ Պէվէ հանդէս եկաւ իրեւ մարմնացումն ամենածայրայեղ միապետականութեան, իրեւ ամենազօր մի ժանդարմ:

Երկու ու կէս տարւայ իր մինիստրութեան ընթացքում՝ այդ ահարկու ժանդարմը ամբողջ կայսրութիւնը դարձրեց մի վիթխարի ոստիկանատուն: Կոիւ, անողոք հալածանը յեղափոխութեան ու լիբերալիզմի դէմ. . . Եւ այդ կուի մէջ Պէվէ կանդ չառաւ մինչև իսկ համբական մթօդի առջեւ. Նա հրահանգեց ջարդել հրէաներին — Կիշինեվի — իրեւ մի տարը, որ „վտանգաւոր“ է պետական տեսական կէտից: Նա բարձրացրեց իր անողորմ մարակը նոյնիսկ այնպիսի տարրերի վրայ, որոնք ցոյց էին տւել դէպի արքայական գահը միմիայն ծայրայեղ հաւատարմութիւն. — Նա նախագահէց հայ եկեղեցական կալւածների աւազակային յափշտակութեան: Նա սաստկացրեց ճնշման ոէժիմը ֆինլանդիայի մէջ, սուդ տարածելով այդ խաղաղ անվաս ժողովրդի վրայ:

Բախնար ժպտում էր դիկտատորին, տխմար, կամազուրկ վեհապետը և ամբողջ բիւրոկրատիան խունկ էին ծխում նրան. . . Պէվէ „մաքրել“ էր յեղափոխականներին, ուժեղացրել էր միապետութիւնը, աննման չտեսնած կատարելութեան էր հասցրել բռնութեան մեքենան, լրտեսութեան սիստէմը, հալածանքի ոէժիմը: Նա „ամենազօր“ էր, յաղթական, անմատչելի, նա շարունակում էր ամբողջ մտածող Ռուսաստանի խողիսողման գործը. բայց ահա նէմէզիդան՝ „Կանգ առ“ որոտաց. . . Ռումբը ճարճատեց մինիստրական սրաթուիչ կառքի տակ և երեկւայ գոռող դիկտատորը մի ակնթարթում դարձաւ այլանդակւած մի դիակ. . .

*

Վրէժինդրութեան ահաւոր թափեր. . . Վաղուց է, ազատութեան բարեկամները անձկօրէն սպասում էին այս սարսափելի, բայց և հերոսական, կազդուրիչ շըրջանին: Տէոօրը նշանախօսը է ոչ միայն եւրոպական Ռուսաստանի մէջ, այլև Շայրերում: Նա տարածում է անդիմադրելի կերպով ցարի լայնարձակ կայսրութեան մէջ, ֆինլանդիայից մինչև երասխի ափերը: Այդ է, որ դժոխային սարսափի է ազգում իշխողների վրայ. . .

Ե՞րբ է աեսնածած, որ ընդամենը 40 օրւայ տարածութեան վրայ չորս ականաւոր դահիճներ շանթահարւեն յեղափոխականի ձեռքով: Պէվէյից քիչ առաջ գելսինդքօրսում տապալւեց ֆինլանդիայի դիկտատորը՝ Բօմբիկօվ. և հաւանօրէն շուռով երևան կը գայ մի ուրիշ Շառուման, որը կ'ոչնչացնէ նրա յաջորդին ևս: Խակ Անդրկովկասում՝ դէպերը նոյնիսկ համաձարակի կերպարանք են ընդունում: Մին միւսի ետևից գետին են փուռում հայ ժողովրդի սիսերիմ թշնամիները, որոնք գեռ երէկ մասնակից էին մի գարշելի արարողութեան:

Դեռ թարմ է այն օրւայ յիշատակը, երբ Կովկասեան դիկտատորը հայ տէոօրիստաներից դաշունաշարւած, արիւնաթաթախ՝ դիմում էր սրարշաւ դէպի:

իր ապարանքը: Այսօր աչա նոր-նոր հարւածներ գալիս են շտկնու այդ վրիպումը: Աչա Հաջիբենդում, օր ցեղ բեկով, մեծ բազմութեան ներկարութեամբ, գնդակահար է լինում փոխ-նահանգեապետ գեներալ Ա Ն դ ը է ե փ, որը անցեալ տարւայ խաղաղ ցորցի միջոցին հրացանի բռնեց Գանձակի հայ ժողովրդին: Աչա ընդամենը մի երկու շարաթ դրանից յետոյ, Իգդիրի հրապարակում սպան- ւում է պուրիշ գազան՝ Սուրմալուի հոչակաւոր գաւ- ւառապետ Բ Օ Գ ու Մ Լ ա Վ ս կ ի, որ այդ շրջանի հայ ազգաբնակութեան խարազանն էր տասնեակ տարուց ի վեր: Աչա մի շարք ուրիշ տէորներ, ուղղւած մանր պաշտօնեաների դէմ... .

Սոսկումն է տիրում դահճներին:

*

Զարկեցէք, քաջարի զաւակներ, ժողովուրդը այլես գութ չունի իր արիւնարբու ոսկիների դիմաց... Մենք ուսւ, ֆին, լեհ, հայ, վրացի, հրէա, վրէժ ենք ամբարել մեր Ճնշւած սրտերի մէջ, թոյն ենք կուտակել բռնակա- լական սարսափների միջոցին. պէտք է դուրս ժայթել, — զարկեցէք: Խոչեմները, ծոյլ թէօրիաների առաքեաները կարող են վախեցնել ռէակցիայի արհաւիրքներով, փոյթ չէ, — զարկեցէք: Կորցնելու այլես շատ բան չէ մնում և ռէակցիան էլ՝ Պլէվէներից սկսած մինչև Գոյլիցի- ները՝ զգում է արդէն, որ ինքն է փորում իր սեփա- կան գերեզմանը... Թոյլ տէուուր իշխէ տիրականորէն թշնամիների վրայ, ցնցէ Հոգիները, զարկ տայ յեղա- փոխական տրամադրութեանը, կրթէ մասսաներին: Եւ թոյլ հայ մարտական կազմակերպութիւնը աւելի և աւելի սեղմէ համբաշնութեան կապը Ռուսաստանի հերոս- եղբայրների հետ և թոյլ ընդհանուր ու անդուլ ջան- քերով վէճն հրդեհը, որ արդէն սպառնում է լափել բռնութեան երերուն շէնքը:

Հ Ե Ր Ա Գ Ի Ւ Ն Ե Ր

(ՍԵՓԱԿԱՆ)

Ներկայ հեռաւգիրները, սոսացւած զանազան աղքիւներից, մենք օրը օրին հազրողեցինք քրանսիական, գերմանական և անգլիական մասնւլի կարևոր օրգաններին:

ԹԱՒՐԻԶ, 14 յուլիսի

Հոյ յեղափոխական նեծիւտիմբերից մէկը, լիկավարու- թիամբ Գումարի, Սալմաստի վրայով ներս խուժեց թիւր- քիս: Սահմանագլուց ոչ նեռու, թիւրք զօրքը, նախօրք տնկիւսած, վիմալըսութիւն ցոյց տևեց, լայց նեթարկեց շնառ մեծ կորուսի: Հայերի, որ կառում էին ներուսապար, միայն շ զնի ունեցան:

ԹԱՒՐԻԶ, 12 յուլիսի

Խէ-Յիլիսայի հայ ժողովրդը եթերկամց թիւրք զիմ- ւարմելի և բրդերի յարձակման: Գիւղը աւերեց, կամսար եթերկիւսի բուժաբարութիւն: Թբքական ամեգիւթիւնները մեծ յուվուրք պատճառացին ամբողջ զաւառում: Արէժմերի լինելու համար՝ շատ շուտով երեամ հեղափոխական

երկու խմբեր՝ «Դաշնակցութեան» լրօշի տակ, Առաջիմը յարձակւեց Մօսումի թիւրքաց զօրամոցի վրայ և մեծ վաս պատճառեց: Երկուրդը Միհրամի խմբավետութիւնի պատ- րաստում է յարձակւելու. Խէ-Յիլիսէի վրայ:

ԵՐԵՒԱՆ 16 յուլիսի
(Թաւրիփի վրայով)

Հայ հայդուկների խումբը, Վահանի ղեկավարութեամբ, յուլիսի 12-ին յարձակում զրծեց սահմանազլիմի թիւրքաց Զօր պահակամոցի վրայ, Ալաշկերտի շրջանում: Ցամատ զիմագրութիւնից յետոյ՝ թիւրք զիմարմերը մեծ ջարդ կր- ցին: Պահակամոցը քանիուց ուումքերով:

ՈՒԽՍԻԱ, 28 յուլիսի
(Հագեա-երովական գծով)

Սասութից և Մուշից յետոյ՝ թիւրք կասավարութիւնը իր բութութիւնների կիմտղունն է դարձել Սլաշկերտը: Թիւրք զիմարմերը երկու անգամ յաղթեցին նայկական յեղափոխ- խական խմբերի ծնորով և ույժմ խոյս են տալիս նրանց նետ բութութից ու իրենց վրէժը առնելու նմզդէն, խաղաղ մո- ղովրդից: Քրդերի և զիմւորմերի բռնութեան մամբանամները սովակալի են և յուզիչ: Զէւալի կատուղի աշխիքնը զնուու է դէպի Սլաշկերտ՝ մատնակցելու կոտորածիմ: Երգանքի երովական հիւպատութիւնը միջամտութիւնը, որին ժողո- վորով յուսով սպասում էր, տեղի չ'ունեցաւ: Ցեղափոխա- կան հայ խմբերը վճռել են սպաշտուան կամգնել ժողովրդի հետ:

ՄՈՒԾ, 15 յուլիսի
(Սօքիայի վրայով)

Զը նայած երովական հիւպատութիւնը մերկայութեան, թիւրքերը շարութակում են կոտորել, թալաթել և այրել: Մուշի շրջակայքում՝ Գոմեր, Դիլիջիգ, Տատրագոմ, Շէլ- իւսուփ և Ալիստան գիւղերը համարեա ամբողջապէս քանդ- ւած են: Օրեզզութիւն գիւղում սպասւած են՝ 19 հայ, Տերք- րամք՝ 9, Գեղաշէմ՝ 8: Շատ լիսկեր կամ, որ մնում են ամթաղ: Երովական հիւպատութիւնը յանախ վկայ-են լինում սրտամաշ տեսաբանների, առանց կարողաւալու մի բան ամել: Թիւրք սոտիկանութիւնը, յեղափոխականներին որո- նելու պատրակով, ոզիլմեր է գործում: Թոյլ չեն տալիս հայերին յարաբերութիւն ութեանալ հիւպատութիւնը հետ, որոնք շրջապատճած են լրտեսմերով:

ԹԻՑԱՆ, 16 յուլիսի
(Թաւրիփի վրայով)

Հայ յեղափոխական հիւպատութիւնը մերկայութեան, թիւրքերը շարութակում են կոտորել, թալաթել և այրել: Մուշի շրջակայքում՝ Կոտորութիւնը կամաւագլուխից կօգակիւթ- պէտութիւններ և սահմանապար գիւղութիւնը, թւով աւելի քան 300 հոգի, համանատար Բիկօվի և մի քանի օգիւթմերի սուացներութիւններ, մտնում են թիւրքաց հողով, շրջապա- տճած հայկական խումբը և տեղում խիստ կլանէ: Հայերը՝ չմայելով լինեց աջող վիրենիքին, ոչ մի գմղակ չին արձու- կում ուսմերի վրայ և շարութակում են կոփալ թիւրքերի հետ: Քիչ ամցած ուղարկում են մի պատգամաւոր սու- երի մօտ, և բացատրելով լինեց ակամ մազումը: Պատգամաւորը ուսմերի մօտ, և բացատրելով լինեց ակամ մազումը:

կալամաւորում է: Ուղարկում է երկրորդը, նրա հետ միևնույթ վարմումքը: Ապա քահամամ մի ծեռքին խաչ, միւսում՝ սպիտակ դրօշակ, գլխում է գէպի սուս զօրքելը, բայց դեռ տեղ չհասած՝ ստորաբար զմղակահար է լինում՝ ուսւներից: Ի վերջու իմ ըստ խմբակետը իր ընկերներով սպիտակ դրօշակը պարզած, իրքի վերջին փորձ, շարժում է գէպի սուսները, բայց սրամք նրան իւ զբդակահար են ամուս լիներների հետ: Մնացածները ստիպած են լինում փախուստ տալ: Ռուսաց կօգակթերը ամպաստելի անգթութիւններ են կատարում: Մամրամասները նաև ակրու:

ՄՈՒԾ, 24 յուլիսի
(Սօֆիաի վրայով)

Ստացեց սուլթանի իրադէմ, որով թոյլատրում է սաստութիւնի դառնալ իրեց լեռները: Դա մի նոր խաբերայութիւն է, եւրոպամ մոլորեցնելու սպատակով: Տեղական թիւրք իշխամութիւնները ամէն կերպ աշխատում են արգելու Սաստութ վերադառնալը: Գործ են դմուս սպասմալիքներ և ծիչ: Դաշտում մնացողներին խոստանում են ամէն տեսակ վիւրութիւններ: Իրադէմ հրատարակելում զուգապետի կոտորածներ մի քամի գիւղերում:

ԷՐԶՐՈՒՄ, 2 օգոստոսի
(Վարսի վրայով)

Հակառակ սաստութիւնների բողոքի և հիւպատոսների մկանողութիւնն՝ կառավարութիւնը ծեռնարկեց զօրամոցների կատուցման՝ Սաստութ գլխաւոր կէտերում: Շինուում են չորս միծ և չորս փոքր զօրամոցների: Դժգունութիւնը յարանում է: Ժուղավրին ոչիմէ օգուութիւնը չէ տրում տնիկը վերաշինելու: Օրական նպաստը վիւրածներին 10 փարայից չէ անցնում: Դրաից դրամական աջակցութիւն ամերամեշտ է:

ԹԻՖԼԻՍ, 2 օգոստոսի

Ամենայի հայոց կաթողիկոս Մկրտիչ Առաջին ուղարկեց մի յատուկ պատգամաւորութիւնը, որ կազմաձ է Պարսկաստանի Հնդկաստանի և Ամերիկայի հայոց առաջնորդներ՝ զերապատիւ Այլաստիան և Սարանեան եպիսկոպոսներից՝ բարորելու Բերլինի զաշնագիրը ստորագրու կատավարութիւնների դէմ, որ վերջնը կատարեցին Հայաստանում և մասնաւորապէս Սաստութ, Մուշ, Ալաշկերու, Վասպուրական: Ազգային ամելախութիւնը չէ, որ պահամնում է հայոց եկեղեցու հոգևոր պետութ, այլ եւրոպական պետութիւնների վաղուց լիվր արած խոստութիւնը. — զոյլութեամ տարրակամ իրաւութներ, վերադարձ գաղթականների և գրաւած գոյքերի, ազատ շըձագյութիւնը երկրի ներսում և դուրս, լըդհանուլ արմիստիա, ազատութիւնը պաշտպաններու իրեց իրաւութքները և բողոքելու անարդարութիւնների դէմ, իմքնապաշտպանութիւնը իրաւութքը լըդդիմ քիւրելը, չէրքէմերի ու մահմէրական ֆաթատիկութեամ, և երոպական կօմտօլ խոստացած բէֆօրմները իրագործելու համար: Պատգամաւորութիւնը պիտի այցելէ Պարիզ, Լոնդոն, Բելլին, Վիէննա, Հունգարի, Փունկուրդ, Վաշինգտոն:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԾԵՒ

»ՈՐՍԿԱՆ« ԽՄԲԻ ԿՌԻՒԾ ԶԱՐԴԱՆԻՍԻ ՄՕՏ

2 յուլիս, 1904

Յունիսի 30-ն էր: Հայիկան աշխարհի զանազան ծալերից եկած 61 հայ քաջեր, հաւաքւած Օլթիի շրջանի . . . գիւղը՝ սպասում էին զինուրական խորհրդի վերջնական որոշման:

Գնում էինք կատարելու մի խոշոր ձեռնարկ, որ երկար ժամանակ խնամքով ուսումնասիրւած ու կազմւած էր:

Մինչ երկու խմբապետները՝ Որսորդն ու Թորգոմը՝ զբաղւած էին զինուրաների մանրամասն դասաւորութեամբ, խմբի քահանան՝ յիսնամեայ Տէր Ղազարը, որ ուխտաւոր էր վեհական գրութեան Աստծուն, երիտասարդական աշխոյժով «նշանար»: Ի պատրաստութիւն էր տեսնում: Երեկոյեան պատարադ պիտի լիներ խմբի զինուրներին հաղորդելու համար:

Գիշերւայ ժամը 12-ին սկսւց ժամերգութիւնը: Հայքաջերը հետզիւտէ հաւաքւեցին եկեղեցի և տասնեակներով շարւեցան սեղանի առջև: Խմբի գրօշակները դրւած էին սեղանի վրայ՝ պատարագից վերջը օծելու համար:

Գիւղական եկեղեցու համեստ պատերի մէջ պատարագիչ քեդայի քահանան մարմացած ջերմեւանդութիւն էր ներկայացնում: Եկեղեցում տիրում էր խորհրդաւոր լուսութիւն: Պատարագից վերջ գրօշակները մեռնով օծեցին, և հայ զինուրները հաղորդեցին ու երգեցին գրօշակների վրայ. . .

Լուսաբացին մօտ էր: Խստիւ պատւիրւած էր զինուրներին իրենց բնակարաններից դուրս չգալ: Միայն տասնապետներին էր թոյլատրած, տեղացիների տարազ հագած, դուրս գալ տասնեակների պէտքերը հոգալու համար: Նոյն արդ միջոցին երկու խմբապետները՝ Որսորդն ու Թորգոմը, խմբի երկու բժիշկները՝ Սիսակն ու Մարտինը, նոյնպէս և Կ. Կոմիտէների ներկայացուցիչները հաւաքւել էին մի ուրիշ մեծ մարագ, որտեղ գտնւում էին ուղմամթերքն ու իրեղները, և համապատասխան կարգադրութիւններ էին անում: Առաւտաեան ժամը 8-ին իրաքանչիւր տասնեակի շորերը, հրացանները և փամփուշտները բաժանչիւրին: Իւրաքանչիւր զինուր վերցներու էր՝ հրացան (բերդան 250 փամփուշտով կամ մօսին 450 փամփուշտով), երկու հատ ուռեմբ, գաշոյն կամ ատրճանակ, ութ ֆունտ հալվայ, վիրակապներ և ճանապարհորդական մանր իրեր: Վերջինները գարսւած էին մէջքի պայուսակների մէջ:

Բոլոր զինուրները բաժանւեցին երկու խմբի, որոնցից մէկի խմբապետն էր Որսորդը, իսկ միւսինը Թորգոմը: Ամէն մէկի խուսը բաղկացած էր երկու տասնեակից և տասնեակը 14 զինուրներից և 2 բեռնակիրներից: Երեկոյեան, արևը մայր մտնելիս, բոլոր զինուրները գուրս եկան մի ձորակ և նկարւեցին: Յայտարարւեց զինուրական կամ միորհորդի վճռը. որոշւած էր, որ երեկոյեան ժամը 9-ին խմբերը դուրս պիտի գան գիւղից: Բոլոր տասնեակները ժամը 8-ին արդէն կազմ ու պատրաստ սպասում էին հրամանի: 2ը նայելով, որ կարգադրուած էր արգելի գիւղացիներին վերջին բոպէին հաւաքւելու, բայց ամբողջ գիւղը լցուել էր հաւաքւածն տեղը: Սկսակ շմաս բարովիկ՝ ջերմ համբոյները և ոգեսորիչ բարեմաղթութիւնները... Անթիւ բերաններ կրկնում էին: «Յաջողութիւն ձեզ, հայ քաջեր, բարի ճանապարհ ձեզ, պատարաստութիւնը պիտի այցելէ Պարիզ, Լոնդոն, Բելլին, Վիէննա, Հունգարի, Փունկուրդ, Վաշինգտոն»...

Գիշերը մութ էր, և ընդհանուր խաղաղութիւն խանգարութ մեր ուսների ու զինուրերի ձայնն էր: Անցանք մէկ բլրային շարքից միւսը, բարձրացանք փոքրիկ սարեր և հասանք անտառը: Ճանապարհին մեզ ոչ ոք չուրիչ բարեմաղթութիւնները... Անթիւ բերաններ կրկնում էին: «Յաջողութիւն ձեզ, հայ քաջեր, բարի ճանապարհ ձեզ, գէպի աւերակ Զարդանիսիսի աղբիւրը»...

Արդէն լուսանալու մօտ էր: Խմբապետը կարգադրեց, որ աղքակից բարձրանանք 100-150 քայլ և հանգիստ առնենք, առանց զինաթափ լինելու: Խուսական սահմանագլխի Հայ 68 սիւնից մէկուկէս վերստ հեռաւորութեամբ՝ թիւրքաց հորի վրայ կանդ առինք հանգստանալու: Բոլոր զինւորները նստելուն պէս՝ յոգնածութիւնից քննեցին: Խմբապետի կարգադրութեամբ ամէն մի տասնեակ մի-մի պահապան էր գրել հսկելու:

Աչա ալդ միջոցին մի պատահականութիւն տակնուվրայ արեց այնքան լաւ սկսած գործը: Աչա ինչպէս. — Քեռնակիրներից երկու հոգի յետ էին մնացել և աղքիւրի մօտ զուր խմելուց յետոյ՝ անսոնհեմարար հէնց ախտեղ էլ ջրի մօտ, պառկել քնել էին, պայուսակները հանելով վրաներից: Չորս մագլող ուսւս սահմանապահ զինւորներ, պատահմամբ գալիս են աղքիւրի մօտ ջուր խմելու և նկատում են քնած կամաւորներին: Ուսւս զինւորներից մէկը գողանում է պայուսակը և փախչում պահականոց: Քնածներից մէկը արթնանում է և նկատելով անցածդաշտը՝ ձայն է տալիս ընկերողը, և միասին փախչում են գէպի այն ըլուրը, որտեղ գտնում էր ամքողջ խումբը, բոլորովին ուշադրութիւն չդարձնելով, որ մնացած երեք ուսւս զինւորները հետեւում են իրենց: Չորրորդ տասնեակի պահապանը հեռուից նկատելով ուսւս զինւորներին՝ անմիջապէս իմաց է տալիս խմբապետներին, որոնք և որոշում են աւելի խորը գնալ, գէպի Թիւրքիա, որպէս զի ուսւսները չխանգարեն և արգելք: Հինեն: Խումբը սկսում է շարժւել գէպի ներս և բարձրանալ յարմարաւոր գիրքեր:

Եւ մինչ մենք 3-4 վերստ սահմանից անցել էինք, նկատեցինք, որ ուսւսական մագլող և սահմանապահ զօրախմբերը, մօտ 150 հոգի, մեզ հետապնդում են: Տեսնելով, որ ուսւսները մեզ վրայ կրակում են, խմբապետները որոշեցին երկու մասի բաժանել: Ուսորդը իր տասնեակներով աւելի առաջ գնաց ու գիրք բռնեց Ղալա-Քօղազի քարում: իսկ Թորգոմը՝ իր զինւորները երեք մասի բաժանեց և յարմաւոր գիրքեր բռնեց ուսւսական սահմանագծից մօտ $2\frac{1}{2}$ վերստ հեռուորութեան վրայ գտնուղ Լիրկ ըլը գագաթներին: Ուսւս զինւորները մեզ վրայ կրակում էին բարձրից, բայց մենք չէինք պատասխանում, որովհետեւ խմբապետները արգելի էին, և շարունակ ձայն էինք տալիս նրանց, թէ „մենք ձեզ հետ գործ չունենք“, սակայն նրանք չէին լուսում, կամ չէին ուզում լսել և հետզհետէ ստւարանալով շրջապատում էին Թորգոմի գիրքերը:

Յայտնւեց, որ ուսւս հրամանատարը՝ անմիջապէս մարդ էր ուղարկել թիւրքաց զինւորների մօտ, որ պատրաստ լինեն ֆէդայիներին գիմաւորելու: Առաւօտեան ժամի 7-ն էր, երբ Սրորդի գիրքի վրայ տաճկական զօրքը կրակ բացեց: Խմբապետը հրամայեց կրակ բանալ թիւրք զօրքերի վրայ Հրացանագութութիւնը սկսեց Կոււեցէք, տղերք՝ երգով և պատերազմական փողով: Դրօշակը պարզւեց, և բոլոր գիրքերից արձագանք տին՝ կրկնելով նոյն երգը: Կոււրը հետզհետէ տաքանում էր, և թիւրքաց զօրքերը տասնեակ զոհէր տալով՝ յետ էին փախչում: Եւ մինչ մենք աջողութեամբ կոււր թիւրք զօրքերի գէմ, ուսւս զինւորները աւելի և աւելի ստւարանում էին ու յօտենում մեր գիրքին:

Ճաշից յետոյ խմբապետ Թորգոմը նկատելով, որ ուսւս կօղակների ահագին խումբը շրջապատում է մերոնց,

ուղարկում է տասնապետ Անուշաւանին զօրքի հրամանատարի մօտ ասելու՝ „Մենք ձեզ հետ կոր չունենք, ձեր սահմանից գուրս ենք, գնում ենք թիւրքաց հողի ներսը և կոււր ենք թիւրքի հետ, ուսափի ինդրում ենք՝ յետ բաշէք ձեր զօրքը“: Անուշաւանը գնաց և էլ չիւրագարձաւ: Հետուից նկատեցինք, որ նրան լսեցին մօտ 15 լոպէ, մի առ ժամանակ դադարեցրին հրացանաձգութիւնից քննեցին: Խմբապետը կարգադրութեամբ ամէն մի տասնեակ մի-մի պահապան էր գրակ բանալ խմբապետը ուղարկեց երկրորդ պատգամաւորը՝ Լեռն Քալանթարեանին, նոյնը յայտնելու: Պատգամաւորը գնաց. բոլոր սպաները հաւաքանցին նրան էին ժամանակակից լսելուց յետոյ, երկու զինւորի հետ միասին ուղարկեցին պահականոց: Չանցած տաս բոպէ՝ Հնչեցրին պատերազմական փողը, և կօղակներն ու սահմանապահները երեք կողմից ուղարկեցին կողմով՝ կրակ տեղացին մեզ վրայ: Մեր գիրքերը բաւականին լաւ էին և այդքան գնդակներից միայն մէկի թևը վիրաւորեց: Մենք չպատասխանեցինք:

Իսկ չուրորդը կողմից թիւրք զօրքերի մի ստւար խումբ, ձորակի միջով բարձրանում էր մօտակայ թլուրը: Խումբապետը հրամայեց թիւրքերի վրայ կրակել և ինքն էլ մի ուումբ առնելով՝ նետեց նրանց մէջ: Հինգ-Վեց հոգի զոհի տալով, թիւրքերը յետ փախան, բայց քէչ անցած սիրտ առնելով ուումներից և հետզհետէ միանալով նրանց հետ, աւագ եկան հայերին ոչնչացնելու համար: „Խաչն“ ու „Մահիկը“ գրկւեցին...

Գեղակները թափւում էին կարկտի պէս: Առաջին տասնեակի գիրքը խառնեւց և ֆէդայի-քահանան, որ տասնապետ էր, կարգադրեց, որ գուրս գան գիրքից և մօտենան խմբապետի գիրքին, որը աւելի ամուր էր: Ինքն էլ գիրքը ձգելով, խառն վեր բարձրացրած՝ ուղղեց գէպի սուսները, իրը երրորդ պատգամաւորը, բայց խաչն էլ չ'օգնեց, — Տէրտէրը գնդակահար լնկաւ մի ուսւս զինւորի ձեռքից: Դրանից յետոյ կուիւը աւելի ևս տաքացաւ: Տղերքը բարձր ձայնով կրկնելով ուուսներէն՝ „անխիղճներ, գուրք ինչո՞ւ էք կրակում, մենք ձեզ չենք պատասխանում“, դառնում էին գէպի թիւրք զօրքերը, միանդապմից բոլոր գիրքերից կրակում նրանց վրայ: Խմբապետները խստիւ արգելել էին ուումների վրայ կրակ բանալ, բայց ուսւսների գնդակներից հետզհետէ լնկնում էին մեր լնկերը մեր մաքիւր աչքի առջև:

տեսնելով իրենց խմբապետի ընկնելը, գուրս են գալիս դիբբերից և զանազան կողմեր փախչում՝ ոմանք գնդակահար սպանուում են, ոմանք վիրաւոր բռնուում և ոմանք էլ փախչելով ազատուում են անտառի մէջ:

Մինչ Թորգոմի տասնեակները այս տեսակ տագնապալի գրութեան մէջ էին, Որսորդը իր տասնեակներով դեռ ազատ լինելով նենք ուուսների գնդակներից՝ բուռն ոգեգորութեամբ կուում էր տաճիկ փախկոտ զօրբերի հետ, որոնք սիրտ առնելով ուուս սեղապայների[“] այդ անսպասելի օգնութիւնից, աւելի և աւելի յանդուգն են դառնուում և Որսորդին շրջապատում են երկու կողմից:

Որսորդը նկատելով որ այլևս անհնարին է շարունակել դիմադրութիւնը, հրամայում է գուրս գալ դիբբերից և փախչելով ազատուել կամ դոնէ ընկնել ուուսների ձեռքը, կարծելով թէ նրանք կը խնայեն իրենց: Այդ Փջոցին ընկերներից շատերը զօհւում են, իսկ ինքը Որսորդը երկու վերը ստացած՝ դեռ շարունակում է կուրը, հետզիւտէ ճարը իջնելով: Մօտենալով իրեն ծանօթ մի ուուս զինուորի, ուզում է անձնատուր լինել, բայց զինուորը կրծքից վիրաւորում և գլորում է քաջ գերդարուն... Միուրիշ ֆեդայի զինաթափ լինելով փախչում է դէպի ուուսները. վերջինները բռնուում են սրան և թիւրը զօրբերի ինտիրքով՝ յանձնում նրանց: Թիւրքերը երիտասարդին տանուում են մի քանի քայլ հեռու և ուուս սպաների աչքի աւաշ պատկեցնուում ու ոչխարի պէս մորթուում են, . . .

Մինչև երեկոյեան ժամը 7-ը դեռ ևս շարունակում էր հրացանաձգութիւնը: Ժամը 7-ին ուուս և թիւրը զօրբերը խառնած փչում են պատերազմական փողը և ուռշբարամ[“] և „ուուս“ ալաղակելով գրաւում դիբբերը, և այնտեղ յաղթական ժպիտը երեսներին միմիանց պատմում են իրենց քաջագործութիւնները: Թիւրը հրամանատարի կարգադրութեամբ սալբատ կարտաշներին[“] տաճկական կօնեակ են հրամցնուում ի նշան երախտագիտութեան, ապա իրար համբուրելով բաժանուում են, ուուսները դէպի ուուսական սահմանագիծը, իսկ թիւրքերը իրենց պահականոցները: Վերադարձին ուուս մագլող կօզակները գաղանացած՝ կիսամեռ վիրաւորներին սուինով ծակոտում են կամ գլուխները քարերով ջախջախում և դիակները բոլորովին մերկանդամ ձգում... .

Մութը վրայ է հասնում, զօրբերը քաշւում են իրենց բնակարանները, թողնելով անտառում 27 սպանաւծ և տանելով իրենց հետ 6 վիրաւոր ու 14 գերիներ: Ինն հոգի կարողանուում են պահել և գիշերով անցնելով սահմանը՝ ազատուել: Հինգ հոգի էլ սպանուում են Որսորդի դիբբում, թիւրքերի գնդակներից, և դիակները տարուում Պալարգազ թրքական պահականոցը:

Սպանաւծների մէջ են՝ ԹՈՐԳՈՄԸ, ՈՐՍՈՐԴԻՆ, ալէքսանդրովից ՎԱՂՈՆ, զոյուձուղից ՏԵՐ-ՂԱԶԱՐԸ, ախալցխացի ՄԻՍԱԿԸ, ալէքսանդրովովիցի ՄԱՐՏԻՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԸ, բագւեցի ԲԱԳԻՐԱՏԸ: Կը: Սպանաւծները, բացի հինգ հոգուց, բոլորն էլ ընկել են ուուսների գնդակներից: Այսօր նրանց դիակները բերեցին թրքական հողից, մօտ 2-3 վիրաւ հեռաւորութիւնից և թաղել տիւն իրենց սահմանի մէջ:

Գաւառապետը մեղադրում է սահմանապահ զօրբի հրամանատար Բիկօվին այն բանի մէջ, որ նա անցել է ուուսական սահմաններից և մտնելով թիւրքաց հողը անմեղ տեղը սպանել է այդքան մարդիկ, մինչդեռ նրանք

թրքաց հողումն էին և առւսաց սահմաններից գուրս Խակօվը մեղադրում է գաւառապետին թույութեան մէջ, ասելով, որ նրա գաւառում ահագին թւով մարդիկ են զինուում, և նա ոչինչ լուր ու տեղեկութիւն չունի:

Նահանգապետը գնաց դէպի տեղը, քննութիւն է սկսած, որը, իհարկէ, Ճշմարտութիւնը երեան հանելու փոխարէն՝ պիտի խճճի հարցը, արդարացնելու համար ուուս պաշտօնեաններին, որոնք թիւրքական գաղանութեան ներկայացուցիչների հետ ձեռք ձեռքի տւած՝ կատարեցին ստոր անդթութեան մի զգւելի գործ: Եւ որպիսի սրտագին բարեկամութիւն թիւրքերի հետ՝ հայկական ուժը խորագիւղու համար: Ուուս զինուորականներն էին, որ տեղեկացը իջնելով խմբի անցնելը, նրանք էին, որ սիրտ և թէ տւին սուլթանի զինուորներին և վերջումն էլ՝ թիւրք պաշտօնեանների հետ կեր ու խում սարքեցին՝ թափած արիւնը տօնելու համար. .

Հայերի ասպետութեան՝ պատասխանեցին ստորութեամբ: „Եթէ հայերը կամենալին, ասել է մի ուուս զինուոր, մեզ բոլորին կը կոտորէին, բայց նրանք մի հատ գնդակ էլ չարձակեցին մեզ վրայ“: Քայլ ի՞նչ արտասւելի վախճան: Քաջերի մահը գոյնութեամբ:

Օլթիի շրջանի ժողովուրդը սոսկում մէջ է անցածդարձնից: Այնքան՝ քաջերի մահը՝ յուղել է ամբողջ գաւառը: Որքան պատրաստութիւն, որպիսի անձնեկութիւն և ի՞նչ արտասւելի վախճան: Քաջերի մահը գոյնութեամբ է կանչում:

ՄՈՍՈՒՆ-ԶՈՐԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

14 Յուլիս, 1904

Յունիսի վերջերին քրդերի և թիւրք զինուորների յարձակումը նւշ-Քիլսեէի, Ղամլիպուճամի և Ղարաբազարի վրայ ստիպեց „Դաշնակցութեան“ . . . կօմիտէին հիմնովին փոխել իր ծրագիրը և երկու արշաւախումք հանել դէպի Ալաշկերտ:

Այդ երկու խմբերը՝ „Արտաւազդ“ և „Մասիս“ յուլիս 11-ի գիշերը ապահով անցան Զեգը կոչւած լեռնակատարով Հին-Բայազէդի գաւառը:

Յուլիս 12-ի առաւտօտեան, „Մասիս“ խումբը, բաղկացած 60 հոգուց, համաձայն նախօրօք կազմած ծրագրի՝ Գայլ-Ղահանի խմբապետութեամբ յարձակում է սահմանից երեք ժամ Հեռաւորութեան վրայ գտնուող Մօսուն գիւղի թիւրքաց զօրանոցի վրայ, ուր տեղական 50 զինուորներին նախընթաց օրը աւելացել էին յօտ 200 նորեկ զինուոր, շնորհիւ նգդիրի գաւառապետ Բօգուս-լավսկու լրտեսութեան: Պահապան զինուորը նկատելով յարձակումներին՝ ձայն է տալիս և անփջապէս սպանում: Վալաշադ վալաշադ վերը վեր են թույուն: Այդ միջոցին զօրանոցի տանիքը բարձրացած երեք ոմբածիգները նետում են հինգ ուումք և զինուորների մեծ մասը կոտորում: Մաժամանակ սկըսում է հրացանաձգութիւնը: Զինուորներից միայն մի մասին է յաջողուում վախչել ծակելով զօրանոցի ետևի պատը:

Հուտով իմացւում է, որ հայոց տներում ևս զինուորներ են տեղաւորած, նախընթաց օրւանից: Յարձակումը տեղի է ունենում և տների վրայ: Սարսափահար թիւրք

զօրքը և ոչ մի գնդակ չէ կարողանում արձակել. աշխատում է միայն փախուստ տալ և գլուխը ազատելք բայց դա շատ քչերին է յաջողւում: Մերոնցից գիւղում սպանուում է մեկը, միւսը վիրաւորւում:

Հրացանաձգութեան ձայնից՝ մերձակայ Քորուն հայ գիւղի թիւրը ղինւղները, թւով 25, փախչում են:

Երբ լուսանում է, և խումբը սկսում է դիրքեր բռնել,
տեղի է ունենում թիւքք զօրքի և քիւրդ աշխրէթների
խուժումը: Ակսում է մի առողական կայլ, որի ժամա-
նակ բազմաթիւ զինազորներ և քրդեր սպանում են:
Կուի տաք ժամանակը զոհւում են խմբապետ ԱԱՀԱՆԻ
(ամերիկահայատակ Մինաս Դոլբալեան — Դրախտ), Նրա
օքնական ԿԱՊԻՏԱՆ-ԲԱԲԻԿԻՆԸ (պահեստի սպայ) և մի
երկու բնտիր տղաներ:

Պօսունի յարձակման հետ միաժամանակ „Արտաւազդ“ խումբն էլ, թող 40 հոգի, Միջրանի խմբապետութեամբ, յարձակում է օքրի զօրանոցի վրայ: Յարձակումը կա- արևում է շատ աջողութեամբ և թիւրք զինորների մեծ մասը սպանում է:

Յուլիս 12-ի երեկոյեան ժամը 5-ին արշաւախմբերը, ամբողջ օրւայ կռւէից յետոյ, յետ մզելով զօրքերի և քրդական յարձակումները՝ նահանջում են գետի Հնգլիք բարձունքները հանգստանալու և միւսնոյն ժամանակ խորհելու յետագայ անելիքների մասին։ Յայտնում է, որ մերոնք 15 կորուստ են ունեցել։ Ահա այդ հանգստի և խորհրդակցութեան ժամին, յանկարծ և անսպասելի կողմից, տեղում են գնդակներ, տղաներից ընկնում են 5-6 հոգի։ Դա ուսկս կօզակների և սահմանապահ զինւորների դաւադրական կրակն է լինում, երեք սպաների ղեկավարութեամբ։

Հայդուկների խորհուրդը որոշում է չգիմագրել, թէև
առաջարկողներ էլ են լինում՝ դաւադրական կրակին
կրակով պատասխանել: Անձնատուր լինելու նշաններն
անգամ ոռւս օֆիցերները չեն ընդունում: Շարունակ-
ում է ոռւս կօզակների գնդակների տարափը, և խումբը
ցրիւ է գալիս զանազան կողմերի վրայ: Տղաների մի
մասը ձերբակալում է ոռւսների ձեռքով, միւս մասին
յաջողուում է խուսափել: Ոռւս զինւորների այդ վար-
մունքը կտաաղութիւն է առաջացրեր...

‘Նկարագրած դեպքից առաջ յունիսի 16-ին, Բայազետի շրջանն էր անցել 14 հոգուց բաղկացած Տնչակեան մի հետևակ արյաւախումբ:

ԱՐՁԵՇԻ · ԿՐԻՒԾ

Սահմանագլուխ, 8. յունիս

Սասուն միակ վայրը չէ, որտեղ յեղափոխական հըրգեցը հետպատճեաւ աւելի լայն ըջաններ է գրաւում, ուր ջանքեր են գործ գրաւում՝ ազատւելու բռնակալի ատելի ժիյց։ Կոիւ բասենում, կոիւ լասպուրականի լեռներում, կոիւ Ապաղայում, կոիւ Արձեշի շրջակայթում... Ամեն տեղ էլ միևնոյն տեսակի կոիւ — յեղափոխական շնչին փոքրամասնութիւնը տաճկական ահագին կանոնաւոր դօրըի և բաշխողուկ քրգերի լէգէսնների հետ... Մէկը հարիւրի գէմ։

Ի պատիւ հայ ֆէքայիների պէտք է տաենք, որ հազարդիւա բացաւութիւններ չեն այն կուխները, որտեղ մի բուռը ֆէքայիներ շատ անդամներ պատւաւոր յաղթաշնակով են գուրս գալիս ճակատամարտից: Այդպիսիներից է Արձէշի կուիւը: Մայիսի սկիզբներին, Գաշնակցութեան „Մ. . .“ կենտրօնական կօմիտէն, համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, իր արամագրութեան տակ եղած գծերից մէկով երկիր անցկացրեց, Աշուա-Երկաթի խմբապետութեամբ, մի մարտական խումբ: Խումբը ապահով առնեն անցնելուց յետոյ, ապաստանում է լիւներում (Գաշնակցական խմբերը իբրև սկզբունք են լնդունել չիցեանել հայ գիւղերում՝ նկատւած դէպքում գիւղացուն վեսա չպատճառելու համար):

իններբորդ օրը խումբը շարունակ 15 ժամ՝ ձանապարհ գնալուց յետոյ՝ սորչում է հանգիստ առնել Սոսէ կունայ գիւղի մօտ, Արձեշին մէկ ժամ մնացած՝ Խօջալլու կոչւած միթին ձորակում:

Խմբի պաշարը սպառուած լինելով՝ երկու հոգի ուղարկում են հաց բերելու. գնացողները չեն վերադառնում: Խմբապետը նորից ուղարկում է երեք հոգի — Քլեցի Պողոսը և երկու Ապօռներին: Գնացողները դիւզ չհասած, հանդիպում են քրդերի և որովհետև անդէն են լինում, ընկնում են Նրանց ձեռքը. բարբարսները անմիջապէս գտնուիներով մորթում են Պօղոսին, որը յեղափօխական հին հայրուկներից էր. Ապօռին էլ վիրաւորում և բանտարկում են, իսկ միւս Ապօռն աջողում է փախչել ու խմբին պաշար հասցնել:

Հետևեալ օրը, երբ խումբը պատրաստւում է ձանապարհւելու, խմբի պահապան ղենւորը իմաց է տալիս, որ քրդերի մի ահագին գոռնդ պաշարել է այն քարայրը, որտեղ խումբը մի քանի ժամ՝ առաջ թցել էր իր գիրքից՝ ցրտից ու անձրեց պատսպարելու համար: Խմբապետը անմիջապէս կարդագրում է կուտի պատրաստել սկսում է հրացանաձութիւնը, մերոնք ներսից խսկ թշնամին գրսից: Ամբողջ օրը այդ ձեռվ անցկացնելուց յետոյ, երեկոյեան խմբապետի հրամանով՝ երկու հոգի փորձում են գուրս գալ այրից և մի քիչ շինթութիւն ձգել թշնամու մէջ որը և աջողվում է: Օգտւելով վայրկենական շփոթութիւնից՝ ամբողջ խումբը կազմ ու պատրաստ գուրս է գալիս այրից և բացօդեայ սկսում է մի տաք կուտի: Բայց նաև քան այրից գուրս գալը, խմբապետը դիմում է հետևեալ միջոցին:— Որովհետեւ զանազան պատճառներով խմբից յետ էին մնացնել չորս հոգի, երկու հոգի էլ պաշար բերելու ժամանակ սպանւել և բւնել էին, պակասած անդամների աւելորդ բեռը և նրանց բաժին պայմանագրի նիւթերը անհնարին է լինում հետը վերցնել, ուստի խըմբապետը որոշում է այդ բոլոր իրերը այրի մէջ մի տեղ հաւաքել և գուրս գալուց առաջ ուսումքերի երկար պատրայգը վաւել քրդերը իսկոյն գրաւում են այրը: Այդ բապէին ուսումքերի ահուելի պայմանը քարուքանս է անում այրը և տեղն ու տեղը գետին փռում 20-ի չափ քրդի գիտակները: Մնացածները սարսափած այս տարօրինակ երևոյթից, փախանսու են տալիս, միջոց տարով խմբին ապահով պատռել շղթան և անցնել Սի քիչ հեռանալով տղերը գիրք են դրաւում և սկսում գնդակահար անել փախտող թշնամուն:

Մերժմանց սպանությունը և յետ են մնում բնդամենը Խօթի
Հոգի, իսկ թշնամուց սպանությունը մօտաւորապէս 55

քիւրդ, որոնցից մի քանիսը ամենայայտնի թուռններից (ցեղապետ-աղնուական): Ալասպուրականի, Բասենի կոխուների մանամասութիւնները տակաւին չենք ստացել:

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Ա Կ

Մ Ո Ւ Յ, 7 յունիս

Հայերու անհանգիստ կացութիւնը բուն Սասունի մէջ նոյնը կը մնար: Շատեր կան, որ անմատչելի լեռներու, փափարներու, քարայրներու և անտառներու մէջ պահած են: Ոյանք անօթութեան զոհ կը լինեն: Զօրքերը և լրտես քրդերը անդադար հետազօտութիւններ ընելով՝ կը գտնեն փախստականները և կը ջարդեն: Անոնք որ քէ մը ուղղամշերը ունին՝ թանկ կը ծախեն իրենց կեանքը, բայց շատերը նւազած, անզէնք, անհաջ՝ զոհ կերթան դահճներու սուրերուն:

Կառավարութեան թելադրութեամբ ահագին թւով զօրքեր են ժափւած, որպէս զի սասունցի հայերը այլևս Սասուն չվերադառնան: Զանոնք Մուշի սանձակի մէջ ցրւելու համար՝ յատուկ յանձնափողով է կազմւած, հողեր գտնելու: Սակայն երկի սասունցիներու և հիւպատուններու ազդու բողոքին վրայ, այս օրերը սուլթանի մի իրադէն հաղորդւեցաւ սասունցիներուն, թէ ազատ են կրկին դառնալու իրենց հայրենիքը: Հակառակ ատոր, թիւրք կառավարութիւնը, մանաւանդ արդի վալին՝ ֆէրիդը, ամէն կերպ գաւեր կը նիւթեն այդ իրադէն չգործադրելու և մեղաթիւրելու համար: Սասունցի հայերու վրայ ճնշումներ ի գործ կը դրւին, որպէս զի անոնք հրաժարին Սասուն գառնալու գաղափարէն: Ամէն օր խումբ խումբ զանոնք կը հաւաքեն և կը տանեն կառավարութեան գուռը և կըստիպեն որ յայտարարեն թէ՝ ո՞ւր որ կառավարութիւնը տեղ որոշէ, հոն է մեր վաթանը»:

— «Թագաւորը Սասուն չի տայ ձեզ», կ'ըսեն և այս կերպով կուզեն նախապաշարել անոնց միտքը: Աւրախալի է ըսել որ ժողովուրդը մինչև վերջ կը պնդէ թէ չի ուղեր ձեռ քաշել իր հայրենիքէն, հոն երթալ կ'ուզեն, այն լեռները, որ շարունակ իրենց արիւնով ներկաւծ է: Ժողովական այդ յամառութիւնը տեսնելով՝ մի քանիները բանտարկեցին՝ միւները վախցնելու համար և կըսպանան ցրւել շատերը աշիրէթներու մէջ: Բայց և այնպէս սասունցիք բողոքեցին հիւպատուններուն և կը պնդեն իրենց որոշման վրայ:

Վ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Վ, 18 մարտ

Պոնտոսի լազերը, որոնք կառավարութենէն արդիւեալ ծխախոտ կը ծախեն, բոնութեամբ կը մտնեն կամախու գիւղերը և սպառնալով՝ իրենց բեռցուցած ծխախոտները կը ձգեն խեղճ գիւղացիներուն վրայ ու կը պահանջեն գրամները:

Այսօրինակ դէպք մը պատահեցաւ Կամախի վարի բագառիք դիւղին մէջ: — Խումբ մը լազեր կը մտնեն յիշեալ գիւղը և ծխախոտները բանութեամբ գիւղացիներուն վրայ ձգերով կը պահանջեն զրամները: Թշւառ գիւղացիք կ'աղացեն ու կը պաղատին, բայց գազան լազերը երբէք չեն լսեր, կը պոռան ու կ'ըսեն յունիք չունիք պէտք է ունեցածներ ծախէք ու մեր ստակը վճարէք որ

երթանք»: Գիւղացիք ալ կը պատասխանեն թէ, «Երկու օր չանցած կուգաք, մենք ո՞ւրկէ պիտի որ վճարենք, առածնիս արդէն չափէն աւելի եղաւ և մեր կարողութենէն վեր»: Ասոր վրայ լազերը տուները կը մտնեն, կ'ուզեն կահճարասիքը յափշտակել: և երբ կիները կը դիմադրեն կրսկիսին կիներուն զարնել: Երկցեան Մանուկ աղայի կինը, որ 70 տարեկան հասակին մէջ է, անգթաբար կը ծեծեն, մահամերձ վիճակի մէջ կը թողնեն ու կ'ելնեն կերթան:

Նոյն իրիկուն գիւղացիք խորհուրդ կ'ընեն. «Մեր համբերութեան ալ չափ ու սահման չմնաց. պէտք է որ մենք դիմադրելու քաջութիւն ձեռք առնունք, զարնենք և զարնւինք»: Առաւօտը կը լուսնայ, ամբողջ ժողովուրդը եկեղեցի կերթայ, գազան լազերը կը մտնեն եկեղեցին և Տէր Ստեփանը մէկ-երկու գիւղի իշխաններով բռնութեամբ գուրս հանելով՝ կըստիպեն առնել իրենց ծխախոտները: Նոյն բոպէին եկեղեցու արարողութիւնը կը խանգարէ, ամբողջ ժողովուրդը՝ երիտասարդ, ծեր, հարս և աղջիկ՝ միահամուռ ոտքի կը կանգնին և կըսկիսին եկեղեցու զանգակները հնչեցնել: կըսպառնան լազերուն և կը պոռան. Կամ պէտք է որ հեռանաք այս գիւղէն և կամ պիտի վաւենք ձեզ կազով. ալ բաւ եղաւ մեր քաշած չարչարանները ձեր ձեռքէն»: Լազերը կը փորձեն զէնքը բարձրացնել ժողովուրդեան վրայ, բայց չեն կարողանար և կը խսդրեն որ իրենց ազատ ճանապարհ տան և երդում ընեն որ չպիտի վկասեն. բայց ապահովութեան համոր, կ'ըսեն, պէտք է որ տէրտէրը և քէհիան մեզ հետ գան գիւղէն մինչեւ մէկ քառորդ ժամ հեռու: Տէրտէրը գիւղին մօտէն յետ կը դառնայ, իսկ քէհիային, երբ գիւղէն արդէն հեռացած կ'ըլլան, ձեռքերը կը կաշկանդին, իրեր մի ոճրագործի, և մինչև երկու ժամ հեռաւորութեան վրայ դտնւող վանքի մեծ նաչք ըստած տեղը կը տանեն. հոն վրայէն ժամացոյցը առնելով քարի մը տակ կը ջարդեն ու իրեն ալ պատական ծեծ մը քաշելով՝ յետ կը ճամբեն:

Վ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Վ, 4 Ա Ա Ն, 27 մարտ

Մի քանի ժամանակ առաջ լուր տարածւեց, թէ զօրքը քաղցից ու ամսականներ չառնելուց կատաղած՝ յարձակւելու և Վանի վրայ կողոպտելու և սրի անցնելու ժողովուրդը: Իրօք փաստը այն է, որ սարայէն եկած մի գունդ զօրք մի քանի ամսականներ չստանալու և անհւարինձով կ'երակրւելուց զայրացած՝ մի ժնդապետի գրգռմամբ հաւաքւել է զօրքի հրամանատարի դռան, սպառնացել է կոտրել գուռը և ներս խուժել բայց կուսակալը ժամանակին վրայ է հասել և ազատել է իր թշնամուն (հրամանատար ֆէրիդը և կուսակալը թշնամի միմեանց), բաւականութիւն տալով զօրագնդի պահանջներին: Բայց մինչեւ փաշայի գալը՝ կատաղած զինուները կողոպտելուց յետոյ, անխնայ ջարդել են: Ծեծ են կերել և կուսակալի որդին, Աղամ բէկը, զինուրական բժիշկը և մի քանի բարձրաստիճան թիւրքեր: Դէպքի միւս օրը քաղաքի բոլոր շուկաները փակւած էին: Այս օրերս Վան քաղաքում անանուն նամակների մի հեղեղ փրթաւ, որոնցով սրանից-նրանից, փոքր ու մէծ գումարներ էին պահանջում, սպառնալով հակառակ պարագային՝ սպանել: Հաստատ աղբէւրից իմացանք, որ գա Հիւսնի փաշայի հեռաւոր խորհրդով

և կօմիսէր Հիւսնիի ու Ադամի անմիջական ղեկավարութեամբ սարքւած մի խաղ է, ապացուցելու, որ յեղափոխականներով լի է քաղաքը Դրանք են, որ յիմարագլուի մի քանի հայերին հաւատացնում են, թէ շուտով ոհայեր դէպք պիտի հանեն՝, իսկ այդ հայերը հաստատ ազրիւրից տարածում են լուրը և տաճիկ ժողովուրդն էլ կարծելով որ ստորդ է, հապճեպ պատրաստում է այս անգամ չի երանակ իրենց կարծելով:

Վ. Ա. Ռ. 25 մարտ

Երզումի ռուսական հիւպատոսը՝ հրաւիրելով հայոց առաջնորդին, նախազգուշացրել է ասելով՝ „թող հայերը զգուշանան ազմուկ ու շարժում առաջացնելուց. այս անգամ թիւրք կառավարութիւնը անխնայ պիտի ջարդէ, նոյնիսկ կին ու երեխաներ. իսկ դուք յոյս չդնէք կրգին, որ հիւպատոսները կը պատսպարեն կանանց ու երեխաներին. մեզ արգելած է մեր դուները բանալ նրանց առջեւ”։ Արդեօք այդ մեզը բոլոր հիւպատոսներին է վերաբերում, թէ միայն իրեն՝ զգիտենք 2ը գիտենք նոյնպէս, թէ երզումի առաջնորդը ի՞նչ է պատասխանել և ի՞նչ միջոցներ է ձեռք առել Բայց նա շտապել է այդ լուրը հաղորդել լանի առաջնորդին և այժմ ամբողջ քաղաքը սարսափի մէջ է։ Մեր առաջնորդը աւելի նեռանդ” է ցոյց տալիս, և ինչպէս երեկում է, ոչ մի միջոց չի խնայում տաճիկ կառավարութեան հետ միասին ոչնչացնելու ըմբռատ տարր եր՝ Ստանալով այդ տեղեկութիւնը՝ նա շտապել է կուսակալի մօտ, որը կրկնել է նախկին պահանջը՝ „Յանձնեցէք կառավարութեան այստեղ գտնուող յեղափոխականներին”։ Մի քանի հայ հարուստներ այդ մտքով յորդոր են կարդում ժողովրդին։

Ի դէպի, յիշատակենք մի լուր, որի ճշտութեանը երաշխաւոր չենք. — Առաջնորդը կուսակալի մօտ եղած ըռպէին, հեռագիր է ստացւում, թէ Ճապանիան գերի է վերցրել 10,000 ռուս զինուոր. Առաջնորդը չկարողանալով զսպել իր հրճւանքը, գլխարկը հանում է և աչքերը երկինք ուղղելով գոչում է՝ „Աս ծերունի հայրապետի անէծքն է”։ Կուսակալը շտապում է յայտնել ռուսաց հիւպատոսին, որը փրփրած ասում է մի քանի հայ հարուստներին. „Հայոց առաջնորդը մոռացմաւ անցեալ ջարդեր. ոչինչ, կը վերյիշէ”.. .

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

(Երեսուհներորդ նԱՄԱԿ)

Ա. Պետերբուրգ, 30 յուլիսի

Հեռագիրը, երեխ, ձեզ արդէն հալորդեց քաղաք աւագ ան երկու սպանութիւնները, որոնք ցնցեցին ամբողջ կովկասը։ Գեներալ Անգրէ եվ Գանձակում և գնդապետ Բօդու լավ սկսէ ի նդդիր, — մէկը՝ փոխահանգապետ, միւսը՝ գաւառապետ, — գլուխցին տէւորիստի հարւածից, հրապարակի վրայ, բազմութեան աչքի առջև։

Այս անգամ սարսափողը ժողովրդում է, որ փոքր առ փոքր վարժուում է քաղաքական վրէժինդ լութեան

ստիպ ի պող ական դաղափարին, այլ „ամենազօր” կառավարութիւնը, որը ապշած է և չէ կարող հաշիւտալ իրեն, թէ ինչպէս երբեմնի խոնարհ, հեղի գլուխ ծողովուրդը այսքան կարճ միջոցում դարձաւ ըմբոստ, յանդուգն և աներկիւղ։

Ես այդ մելոր կառավարիցներին եմ թողնում պարզելու այդ քաղաքական ալյակերպութեան հոգեբանական պատճառները, և կը բաւականանամ միմիայն մի քանի խօսք ասելու այն զոհ է բ ի մասին, որոնց արիւնով ներկւեցնոյն հողը, որը տարիներ շարունակ իր մէջ ծծեց շատ անմեղների անմեղ արիւնը։

Գեներալ Անդրէենի երեք տարուց ի վեր փոխանական գաղափետ Գանձակում՝ վիրջերս մանաւանդ յայտնի էր դարձել իր հայկական տրամադրութիւններով։ Այդ կարձամիտ աստիճանաւորը, ինչպէս երեւմ է, հայկական խնդիրը, կամ աւելի ճիշդն ասած՝ հայկական դիակները պատսպարեն կանանց ու երեխաներին էր ուղում դարձել՝ բարձրանալու, իշխան Գօլիցինից շքանշաններ և գանձարանից լաւ գումար ստանալու համար։ Գանձակ ոտք դրած օրից՝ նա համարեա երկու ամիսը մի անգամ շինծու և ստայոդ ղեկուցագրեր է տալիս կովկասեան կառավարչափետին՝ „հայկական դաւադրութիւնների” մասին։ Զեկուցագրերը յաջորդում էին մէկը միւսին, բայց դաւայրութիւնը չէր երեւմ ։ Եւ ահա անցեալ 1903 թիւ սեպտեմբերին, Անդրէենի գրութէն եկած համարեց՝ մի մէծ գործ ստեղծելու։ Հայոց եկեղեցու գործը յավշտակելու տխուր օրերն էին։ Ժողովուրդը սպաւոր, վշտահար՝ ողբում էր ստացած հարւածը։ Գանձակում էին ինչպէս և ուրիշ քաղաքներում։ Հայերը վճռեցին կազմել բողոքի խաղաղ ցոյց ։ Եւ երբ ցոյցը վերջացած ամբոխը ցրում էր, վրայ հասաւ Անդրէեն՝ աչքերը կարմրած, փրփրած, կատաղութիւնը դէմքին։ Հասաւ և թերեց կօզակներ, ոստիկանութիւնն եւ սգեսուած իր ուժով, նա հրամայեց հլու կօզակներին՝ կտրել ամբոխի առաջը, կանգնեցնել նրան և կրակել ։ Եւ ինըը, այդ խելագար քաղաքագէտը, առաջին օրինակը տւեց, ատըրաձանակի հարւածով գետին տապալերով մի հայ երիտասարդ։ Նրա օրինակին հետեւցին բիրտ կօզակները և միմեանց ետեւից գետին փոեցին բազմաթիւ դիակներ. . . Կատարեւց մի հրէշաւոր բոնութիւն և ամբողջ քաղաքը ընկաւ սուգի մէջ։

Թափւած արիւնը, սակայն, նրան չխրատեց, այլ աւելի սիրտ տւեց։ Իր ատելութիւնը դէպի հայերը նա սկսեց արտայայտել աջ և ձախ։ Ակսեց կուեցնել հայերին թիւրբերի հետ, ձեռնարկեց խուզարկութիւնների, շատերին քծել տւեց և կարճ միջոցում երբեմնի խաղաղ հանգիստ քաղաքը դարձրեց յուղմունքների և իրարանցման կենտրոն։ Անպատիժ պահել նրան կը նշանակեր աւելի սիրտ տալ այդ անխիղճ թշւառականին։ Եւ պատիժը տրւեց. . .

Անդրէենից աւելի անտանելի էր գաւառապետ Քօպուլավոկի՝ Սուլմալուի ցարը, թէկ նրանից աւելի ցածը պաշտօնով։ Տասն տարուց ի վեր, ինչ նա նշանակւած էր Սուլմալուի գաւառապետ, այն պատախտ գաւառը հանգիստ օր չէր տեսեր ։ Եւ հասկանալի է։ Նրան նշանակեցին յիշած գաւառուում այն պատճառով միայն, որ գեռ կարս և Զաքաթալա եղած ժամանակ՝ յայտնի էր դարձել իրեւ խստասիրտ, անդութ պաշտօնեայ, իրեւ

աննման կաշառակեր և իբրև եղակի հայատեաց—երեք յատկութիւն, որոնցով միշտ կարելի է առաջադիմել միապետութեան այս գրբախտ անկինում: Նրա սուրբը կարուկ էր և աջ ու ձախ կրակ էր թափում, երբ երեւանի նահանգապետի պաշտօնը վարում էր գեներալ ֆրէզէ, որը շնորհիւ տիկին Բօգուսլավսկու „ազգեցութեան“... ուժգործին հովանաւորում էր գեղեցիկ կնոջ գաւառապետամուսնուն: Ֆրէզէ հեռացաւ Երեւանից, բայց Բօգուսլավսկին շարունակեց մնալ իր պաշտօնում, որովհետեւ Փրէզէի նոր, աւելի բարձր պաշտօնը կատարելապէս յարմար էր էլ աւելի ուժգործին հովանաւորելու այդ ոճագրծին, մանաւանդ որ իշխան Գօլիցինին հէնց Բօգուսլավսկու նման ու ու ս ա ց ն ո զ ն ե ր էին հարկաւոր, հաւատարիմ, ինչպէս կծան, և ամբարտաւան, ինչպէս չենօվիկ:

Հայերին հալածելու համար, նա հնարում էր դժոխային ըսւած միջոցներ: Հազարից մէկը: Մի օր, ամբողջ Իգդիրը քնից զերկենալով՝ սարսափով իմացաւ, որ գիշերը, անյայտ մարդիկ, քանդել են ուղղափառ ուսւա եկեղեցու պատը և քարերը թափել: Կատարւած էր անօրինակ սրբապղծութիւն: Գիտէ՞ք, թէ ինչ է նշանակում Կովկասում գիպչել ուսւաց եկեղեցու պատին — դա հայուանք է և Աստծուն և ցարին: Բօգուսլավսկին անմիջապէս զեկուցադրեց Երեւան, թէ ուսւաց եկեղեցու պատը քանդել Հայերն են, որոնք չեն ուզում որ Իգդիր ուղղափառ եկեղեցի շինուի: Եւ իբրև հետևանք այդ զեկուցադրի՝ սկսւեցին ձերբակալութիւններ, խուզարկութիւն, աքսոր: Յետոյ, ... յետոյ, երբ անցել էր չորսհինգ տարի, բոլորովին անսպասելի կերպով բացւեց, որ այդ ամբողջ պատմութիւնը սարբել էր ինքը գաւառապետը իր գործակալների միջոցով Հայեր աքսորելու և զեկուցադրեր պատրաստելու նպատակով:

Այդ բոլորը բացւեց, բայց Բօգուսլավսկին էին մնաց գաւառապետ, որպէս զի շարունակէ քանդել, հալածել տանջել: Յուսահատ ժողովուրդը մի քանի անդամ գանդատ ուեց իշխան Գօլիցինին: Եւ մի անդամ, երբ ինքը Գօլիցին անձամբ եկել էր Սուրբաղու, տեղնուտեղը տեսնելու ոիրեն յանձնւած երկիրը՝, գիշական բնակիչների մի պատգամատութիւն ներկայացաւ իշխանին և ալեւսագին ինդրեց ազատել գաւառը իր այժման մեծից: Միամիտ մարդիկ. — Նրանք վճռել էին այնքան վտանգաւոր մի պատգամատութիւն կազմել՝ յոյս դնելով Կովկասեան գլխաւոր կառավարչի արդարութեան վրայ: Բայց ով է տեսել, որ միապետութեան մէջ՝ մեծ աւորի գողոքողը անպատիժ մնար: Զէ որ դա յեղափոխութեան նախանշանն է: Եւ իշխան Գօլիցին, կատաղութեան մէջ ինելքը կորցրած, յարձակւեց պատգամատութերից մէկի վրայ, մի պատկառելի ծերունի, բռնեց նրա միրուքից, թափահարեց և գուաց. ութէ էր մի անդամ համարձակւէք գանդատ տալ բոլորիդ Սիբիր կը քշեմ»...

Ասաց և դարձաւ Թիֆլիս: Խսկ ժողովուրդը մնաց յուսահատ, անօդնական, ձեռքերը ծալած... Եւ ահա յուլիսի Զհին, մի աներեսոյթ ձեռք ստանձնեց հանուր ցասման արտայայտիչ գերը և ժողովրդական վրէժի հանգոյցը լուծեց հրացանի մի գնդակով... .

Ուրիշ ելք չկար:

Վերջինն է արգեօթ այս Տարաբախտաբար ոչ ինչպէս ցոյց են տալիս լուրերն ու փաստերը: Իգդիրի գէպերից մի քանի օր յետոյ, մի ուրիշ խուլ անկինում, Հին-Նախիջևան քաղաքում, որ այնքան մեկուսացած է քաղաքական հոսանքներից, դարձեալ յաներեւութեան մի ձեռք, քաղաքային այգու մէջ, ահագին բազմութեան առջև, ատրճանակի մի հարւածով սպանեց կառավարչական մի գործակալ յայտնի իր մատնութիւններով և այլ շատ բաներով: Կետին տապալելով իր զոհը, սպանողը առաջ անցաւ խրոխտ և ատրճանակի հարւածներով՝ ձեղքեց ամրոխն ու անյայտացաւ...

Անյայտացած մի քաղաքում, դրանք՝ յեղափոխական գաղտնի կօմիտէնների այդ անվեհեր գործակալները երեւան կը դան այլ տեղեր, ուրիշ քաղաքներում՝ շարունակելու արիւնու վրէժի գործը, որի համար նրանք ցոյց են տալիս այգքան անվեհերութիւն: Նիւ և թը լը, տարաբախտաբար, անպակաս կը լինի, որովհետեւ Պէտքի բէժիմը՝ աջակցութեամբ Գօլիցինի լեցը է կովկասեան երկիրը պատլիկ Պէտքներով և Գօլիցիններով որոնք դժբախտ ազգաբնակութեան կեանքը դարձել են թոյն ու արտասուք, ախ ու շիվան...

Զարգանդած տէուօրիստական ոգու այդ անպատում բռնկութից, իշխան Գօլիցին, որ արդէն սարսափի մէջ էր հօկտեմբերի 14-ի փորձից ի վեր, կծիկը կապեց, փախաւ Պէտերբուրգ, ինդրելու իր ուսուցչի՝ ամենազօր Պէտքի հովանին, բայց հովանու տեղ՝ գտաւ նրա դիակի փոշուանքները, թափւած փողոցի կեղսու ու փոշու մէջ...

Է. ԱԿԱՆՈՒՆԻ

Թ Ե Ր Թ Օ Ն

ՍԱՍՈՒԻՆԻ ՀԱՐՑԸ

ՔՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԻԱՍԵՆՑՈՒՄ

ՅՈՒԽԻՒՆԻ 9-Ի ՆԻՍ

(Պաշտոնական արժանագրութիւն)

(Ծաբունակ, № 7-ի)

1894-ի և 96-ի պատմութիւնն է, որ վերսկսւում է: Միւնոյն վայրերն են՝ Սասուն, Մուշ միւնոյն գիւղերն են՝ Կէլեկուզան, Տալորիկ, Սէմալ և ուրիշներ, որ ես կը յիշեմ այս ըսպէիս: Միւնոյն մարդիկն են՝ Զէքի փաշա, Փէրիբ բէյ, զոհերն են միայն ուղիչ, որովհետեւ մի քանիսը բախստ են ունեցել այն բախստ, նահատակւել առաջին հարւածի տակ և չենթարկւել կենդանի մնացածների հետ Անծ-Մարդաբանակի հրահանգած ոճիրներին:

Միթէ այսօր 1894-ի անցքերի յիշողութիւնների գիւմաց՝ մէնք ըսպէտք է անմիջական դաս առնենք այդ անցեալից:

Թոյլ տւէք համաւոտակի յիշել ձեզ այդ ժամանակի անցքերը: Այն միջոցում ես պետական գանձարանը եռանդում էր յետներալ կոչւած մի տուրք Հայերից, որոնց մեղադառն էին՝ այդ հարկերը որոշ ժամանակից իվեր չըլմարելու համար: Չեռք էր հայերի բոլորը եկամուտները, նրանց ոչխարները, նրանց բոլոր հարստութիւնը: Ապա վրայ հասան քրտերը, որոնք իրենց կողմից պահանջեցին այն զելծական աւանդական մեծարքները, որ նրանք սպանութիւն ունեին պահանջել հայերից:

116

Այս վերջինները միամտաբար գիմեցին թիւրք իշխանութիւններին՝ օգնութիւն ու հովանաւորութիւն ստանալու համար: Վնացին Բիթլիզի վալիի, Թաքսին փաշայի մօտ և ինսդրեցին զօրք զրկելը Բիթլիզի վալին զրկեց նրանց Դիարբէքիրի վալիի՝ Մուստաֆա փաշայի մօտ, և այս վերջինը միջամտեց՝ քրդերից իրօք որսը խելու համար, սակայն իրեն պահելու նպատակով, այսպէս որ՝ թէ Հայերը զրկեցին իրենց վերջին սանտիմներից և թէ քիւրդերը մնացին կատաղած նրանց գէմ:

Եւ 1894-ի գալուսնը՝ անցքերը գահավիժեցին: Զէքի փաշան, որ արդէն ըրբորդ զօրաբանակի հրամանատարն էր, շարժում է իր ուժերը և սկսում է մի լնդհանուր որսախուզապ: Նա առաջ է նետում վոհմակների պէս, իր զօրքերը—կանանաւոր բանակի, քրիեր ու համբդիէներ—Սասնոյ և Մուշի լեռնականների վրայ: Կամաց-կամաց ամբողջ ապաբնակութիւնը ստիպւծ եղաւ կենարօնանալ երկու-երեք կետերում: Եւ միևնույն Տալուրիկում ու Կէլիէկուզանում, ուր կատարեց այս մայիսի 5-ի գրաման, միևնոյն վայրերում, 1894-ին, այդ մարտասպան-զօրապետի աջքերի առջև ու նրա հրամանով, տեղի ունեցաւ մի անմուտանալի ողերդութիւն: Գրան-սիայում և Եւրոպայում չեն մոռացել այն սոսկափ տեսարանը: Զէքի փաշան, տեղեկանալով, որ հարիւրաւոր զինւած հայեր ապաստանել են լեռներում, խոստացաւ նրանց ազատ թողնել: Բայց երբ այդ հայերը միամը-առութեամբ նրա խօսքին հաւատալով, ցած իջան զինա-թափ, փաշան փորել տւեց մի փոս Կէլիէկուզանի առաջ ուր խառնիխուռուը թափել տւեց հարիւրաւոր հայեր, մեռած, վիրաւոր, կենդանի: Բոլոր նրանք, որոնք ունե-ցել են իրենց աշքերի առջև այդ ահուելի ողերդու-թեան պատճերը, բնաւ չեն մոռացել այն: Այդ պատ-ճերը կը հալածէ նրանց մինչեւ իրենց վերջին օրը, և նրանք գժւարութեամբ կը բռնեն, որ գիւեանափիտու-թիւնը թոյլ է տւել Զէքի փաշային՝ վերստաննենել իր հրամանատարութիւնը և իր արիւնոտ գործը: (Ժափառա-րութիւններ):

Եւրոպան ուշ, կամաց-կամաց, ի վերջոյ իմացաւ ճշշ-
մաբուռնչիւնը: Այդ գէպքերը տեղի էին ունեցել 1894-ի
օգոստոսին և միայն 1894-ի նոյեմբերին էր, որ հանրային
կառերը սկսեց առաջնորդութեամբ ուղարկել նախարար

Ի՞նչ արաւ Դուռը այդ վայրկեանին: Նախ և առաջ ամէն բան հերքեց, ապա յայտարարեց, որ ինքը կանգնած է եղել յեղափոխական խմբերի դիմաց, որ իր արածը թեթև բան է եղել և որ հայերը իրենք են կոտորել զիրենք: Այդ նոյն պատճառաբանութիւնը տեսնում ենք և այժմ: Վերջապէս, երբ պետութիւնները՝ Գրանսիան, Անգլիան, Ռուսաստանը յամառեցին, երբ նրանք պահանջեցին նշանակել մի յանձնաժողով, մի պատգամաւորութիւն, որին յանձնարարւէր՝ քննութիւն կատարել տեղնուտեղը՝ գիտէք թէ ինչ ձևակերպիլ համարձակւեց Դուռը: Նա յանդգնութիւն ունեցաւ ներկայացնել պատճառներ, որ նա կարծում էր ունենալ — պատճառներ՝ ձեռնարկելու համար այն, ինչ որ նա անւանում էր ապստամբութեան ձնչում: Ենդափոխական խմբերի կազմակերպում, Հարկերի մերժում, վառօդի ու արձիճի բաժանում, Փէդայիների գումարումներ Եւուն վրայ, այսինքն Հայերի որոնք յանդգնութիւն ունեին գիմարդել Հայ գիւղերի հրդեհումներ նոյն հայերի ձեռքով, այդ չափածիների որոշումը՝ ցնցիւութիւր գինուորներին, մեռ

ջապէս նրանց անպատրւակ յարձակումները կալսերական զօրբերի վրայ:

Սկսեցին քննութիւն։ Ուզեցին լրջօրէն քննել այն
պատճառաբանութիւնները, որ Դուռը առաջ էր բերում՝
ծածկելու համար կատարւած ոճիները։ Ֆրանսիայի,
Ռուսաստանի, Անգլիայի հիւպատումները, որոնք միաժա-
մանակ սկսել էին այդ քննութիւնը, յայտարարեցին
պաշտօնապէս, որ իրօք յեղափոխական պրօպագանդ չէր
մղել, որ հարկը կանոնաւորապէս հաւաքւում էր և որ
ինչ վերաբերում է ու ազմամթերքին՝ հայերը ստիպւած են
եղել հայթայթել նրանց՝ ինքնապաշտպանութեան բնա-
կան մղումով։ Այդպէս յաղթականորէն պատասխանւեց
Դրան առաջ բերած բոլոր կէտերին և ոչ միայն Հրա-
պարակախօսները, այլ նոյնիսկ արտասահմանի մեր դիւա-
նադիտական կամ հիւպատոսական ներկայացուցիչները
այնպիսի ուժգին ցասում զգացին, որ՝ Փրանսիական
խիզճը սփոփելու համար՝ գրեցին որոշ խօսքեր, որ ես
թոյլտութիւն եմ ինդքսում կարդալ — նրանք մնում են
նոյնքան ճշմարիտ այսօր, որքան և սրանից 10 տարի առաջ
նախ մի Փրանսիական հիւպատոս էր, այ. Բերժը ուն-
որ գրեց հետեւալը.

„Ամբողջ պատասխանատւութիւնը ընկնում է կառավարութեան ու իր պաշտօնեաների վրայ“:

Դրանից յետոյ, ֆրանսիական գեւսպանի տեղապահն էր պ. Լա Բուլինիէր, որ գրում էր այն ժամանակաշրջանին հանուսը Հանօտոյին.

„Թիւրք կառավարութեան չկամութիւնը և վարանումը հասցըել են խնդիրը այնպիսի մի կէտի, ուր միայն ամենակորովի և ամենակտրուկ միջոցները կարող են շանս ունենալ՝ կասեցնելու շարժումը... Ստիպողաբար անհրաժեշտ է՝ փոխել բալէշի իշխանութիւնները նաև մացնել ու էֆօրմները, որոնց նախաձեռնութիւնը պիտի ընդունէ սուլթանը անյապաղ”:

Տաս տարուց աւելի է, ինչ այդ իրողութիւնները
տեղի են ունեցել, և այդ խօսքերը արտասանել են, և
եթէ կհատեցուցիչ, գրգռող, յուսահատեցնող մի Հա-

գամանք կայ Արևելեան այդ խնդրի մէջ — դա չէնց
այդ յափտենական վերսկսումն է, այդ ոտնահարումը
միենոյն տեղում, որին մենք միշտ դատապարտւած ենք
Բաւական չէ, որ Եւրոպան ընդունում է — որպէս
նոր բարենրոգումներ — այն խոստումները, որոնք քան
անգամ արւել են նրան, այն միջոցները, որոնց կիրառումը
հարիւր անգամ ծանուցւել է արդէն, բաւական չէ այդ
Եւրոպան ցոյց է տալիս, իբր թէ լուրջ ընդունում է
այն ողորմելի և ստայօդ կրկնութիւնները, որոնցով Դուռը
փորձում է ծածկել իր նոր ու ամենագարշելի ոճիրները
(Ժափանապութիւննե):

Ես հարցեում եմ ինձ, արդեօք այսօք իտես մի եղեռ-
նափորձի, որը, լաւ գիտցէք, սկզբնաւորութիւն է միայն
պիտի նորից կաշկանդւենք այն մեթօսով, որը անքան
վատ ծառայութիւն մատուցեց մեջ 1895-ին և 96-ին

Գիտեմ, անշուշտ, որ ներկայումս մենք ունենք կառավարչական նստարանի վրայ արտաքին գործերի գլուխութը՝ որը շատ ընդարձակ չափով բաժանում է մեր զգացումները։ Ես գիտեմ, որ ամեն անդամ, երբ կարողացել է նա տւել է շատ իրական բարեեցակամութեան ապացոյցներ հայ ազգաբնակութեան վերաբերյալը։ Գիտեսոր երբ մենք շտապեցրինք նրան նշանակել նոր հիւպատունունու առջև կառավահարձութեան մասին առաջարկ կատարել և անհաջող առաջարկ կատարել առաջարկ կատարել և

գըստացնել իրենց ներկայութեամբ ազգաբնակութիւնը Սասունի և Մուշի բոլոր կէտերում, — նա այդ արեց փութեառութեամբ:

Սակայն, որքան էլ մեծ լինի բարի կամբը, այդ միջոց-ները անտարբերութիւնից էլ աւելի վտանգաւոր են, երբ մոււմ են կիսամիջոցները: Հիւպատոսներ նշանակել նրա համար միայն, որ սրանք մնան լոկ անզօր ու անգործ վկաներ, — դա աւելի վատ է, քան եթէ ֆրանսիան բնաւ չունենար ներկալացուցիչներ այն վալրերում: (Ժա-փանարութիւններ այլ եւ այլ նստարանների վրայ):

Բողոքներ դուք արել էք և արել էք կորովի կերպով: Ասենք, Փրանսիան էլ մնակ չէ եղել. նա իր հետ ուն-ցիլ է Ռուսաստանը, Անգլիան և ուրիշ պետութիւններ: Բայց սուլթանը դիտէ, թէ ինչ արժեն այդ բոլորները, երբ նրանց ետեկից չկայ հաստատ որոշում՝ հասնելու նպատակին և յետ չնահնջելու գործողութիւնների աւագ եթէ սրանք անհրաժեշտ դառնան:

Այս վալրկեանիս յախնուում է, որ ֆրանսիական գրոշը պտտեցրել են Արևելքի ու Փոքր-Ասիայի եզրերները. Փրանսիական նաւատորմը հէնց այս րոպէիս, կարծեմ, գտնուում է Կ. Պօլսում, և թոյլ տւէք ինձ ասել, ես չեմ դիտում իրեւ նպաստաւոր մի հանգամանք, որ ուղղակի հէնց այս րոպէիս է նա ընդունում սուլթանի հիւրա-սիրութիւնը: Բայց թոյլ տւէք ինձ հարցնել ձեզ, ար-դեօք այսուհետեւ հաստատած է, իրեւ Փրանսիական հանրապետութեան անբոնաբարելի մի օրէնք, որ Փրան-սիայի նաւային ուժերը կարելի է գործածել՝ այս կամ այն մասնաւոր անձանց դրամական պարտքերը ստանալու համար. . . (Չատ լաւ, շատ լաւ, ծայր. ծախակ. եւ աշակ. նստա-ընների վրայ):

Կան աւելի սրբազն պարտաւորութիւններ, քան դրանք: Դա բարոյական քաղաքական, միջազգային, իրաւական յանձնառութիւններն են, որ ունի ամբողջ Եւրոպան սուլթանի դիմաց: Մի՛ սխալւէք, պարոն մինհստր. եթէ դուք այժմ սխալւէք ընդունել սուլթանի պատըր-ւակներն ու ձախորդութիւնները, կամ՝ աւելի որոշ ասենք՝ սուլթանի սեերը, մենք մեր խոզի վրայ չենք ունենայ միմիայն Սասունի մէջ ընկած—չգիտեմ, պէտք էլ չունիմ գիտնալու—3,500 թէ 5,000 հայ դիակները: Յիշեցէք, որ 1894-ի Սասունի շարդերով արիւնոտ վարագոյն էր միայն, որ բարձրացաւ, որովհետեւ ժամանակին դարման չեղաւ չարէին, որովհետեւ չպահանջեցին Զէքի փաշայի ու Փէրիդ պէյէ անմիջական պաշտօնանկութիւնը, որովհետեւ չպահանջեցին Բէրլինի դաշնադրի 61-րդ յօդւածի լիակատար կիրառումը:

Ոչ միայն 1904-ին Սասունում սպանւած 6 հազար հայերի պատասխանաւութիւնն էր, որ Եւրոպան առ-նում էր իր վրայ, այլև սուլթանի հրամանով գետին փուած 300 հազար դիակներինը—դըրեմէ մի ամրոց ազգի սպանութեան պատասխանաւութիւնը (Ժափան-առութիւններ ծայր. ծախակովմ եւ աշակովմ):

Եթէ դուք չէք ուզում թոյլ տալ վերսկսելու. մի մեծ ոճի, որը ոչ միայն մի եղեռնափորձ է ընդգետ՝ մարդ-կայնութեան, այլև գերագոյն մի վտանգ. Արևելքի և աշխարհի խաղաղութեան համար, ապա առաջարկում եմ ձեզ — քանի որ ունիք ազգու գործակիցութիւնը Բէրլինի դաշնադրին ստորագրող առնուազը, երկու մեծ պետութիւնների մասնակութիւնների, Անգլիայի ու Ռուսաստանի, — առա-շարկում եմ ձեզ՝ բարեհաճել անհրաժեշտ գիտումներն անել Կ. Պօլսում: Առաջարկում եմ, իհարկին, պաշ-

պանել այդ դիմումները նոյնպիսի մի ցոյցով, որով դուք գոհացում ստացաք չորս տարի սրանից առաջ (շատ լաւ, շատ լաւ): Առաջարկում եմ ապահովել ձեզ մի այնպիսի ապագայից, որ դուք այժմ դեռ ևս կարող էք հեռացնել բայց որ վաղը կարող է ենոյս տալ ձեզնից, ինչպէս և մեզնից: (Ռուսն ծախանարութիւններ ծայր. ծախակովմ եւ աշակովմ):

ՆԱԽԱԳԱՎԱՀ. — Խօսքը արտաքին գործերի պ. մինհստրին է.

Պ. ԳԵԼԻԱՍԻ, ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՒԽԱՏՐ. — Նախ քան խօսելը այն իրողութիւնների մասին, որոնք պատճառ են եղել մեր յարգելի պաշտօնակցի հարցումնեն, ես հարկաւոր եմ սեպում, նրանից յետոր, յիշեցնել Պատգամաւորա-կան ժողովին, որ Հանրապետութեան կառավարութիւնը, նախանձախնդիր այն ստորագրութեան, որ նա դրել է 1878-ին Բէրլինի դաշնագրի առաջ մի քանի անգամ վերջին ապրինների ընթացքում տւել է իր աշակցութիւնը՝ երաշխատորելու համար գործադրութիւնը այդ գաշնագրի կարգադրութիւնների, — թէ նրանց, որոնք ամփափւած են 23 յօդւածի մէջ և յերաքերում են Մակեդոնիային և թէ նրանց, որոնք յայտնաւածն է Յ1 յօդւածում և վերաբերում են Փոքր-Ասիայի այն շբաներին, որոնք առանձնապէս բնակւած են հայերում:

Ինչ վերաբերում է Հայուսանին, թէ պէտք և մը առեւտրական շահերը բնաւ չեն պահանջում—ինչդըսմ եմ հաւատալ — ես աւելացրել եմ մեր գործակալաշերէ թիւը այդ երկիրը կազմող գաւառներում, միմայն և միմիայն ցոյց տալու համար ֆրանսիայի հագատառութիւնը: 1903-ի սեպտ. 14-ին ես սահմանել եմ փոխ-հիւպատոսութիւնն վանում և այս տարւայ յունւարի 23-ին հաստատել եմ մի ուղի հիւպատոսութիւնն Խար-բերդում: Նոյնը արել են Ռուսաստանը և Անգլիան: Այդ հիւպատոսների մի ճշմարիտ սփո-փանը է եղել ազգաբնակութեան համար, և շատ անգամ մեր գործակալների միջոցով մեզ յայտնաւած երկիրը փա-րատւել է մի փութեառ ու կորովի միջամտութեամբ Կ. Պօլսում:

Մինչև իսկ, երկու տարի սրանից առաջ — յարցելի պ. Պրէսանսէն գիտէ այդ — ես կազմակերպել էի մի յա-տուկ միստիա, որը պտտել էր այն շօջանները, որոնք մեզ ցոյց էին դրւած, իրեւ քրդերի սպառնալիքի տակ գտնուող — քրդերի՝ որոնք, ըստ ոմանց, գործիք են թիւրքաց իշխանութիւնների ձեռքում, ըստ ուրիշների՝ նրանց սարսափն են և որոնք թերևս միաժամանակ կամ փոխնիփոխ թէ այս են և թէ այն:

Ցամենայն դէպս այդ միստիան ունեցել է լաւ հե-տեւանքներ, և ազգաբնակութիւնն վկայել է մեզ իր երախ-տագիտութիւնը, — յարգելի պ. Պրէսանսէն, իհարկէ, չի կարող չիմանալ այդ:

Այժմ գալիս եմ Սասունի անցրերին Խաչագավանների ասաւ գետավինների բազմաթիւ խմբեր՝ քրդերի և թիւրք-քրդերի հետ ունեցած բազմաթիւ ընդհարութիւններից յետու, Մարչամ Իթթիլզում և Անահի զրջակայքում Այդ գե-դարինները հայերի համար մի քիչ նոյնն են, ինչ որ անցիալ տարի բուլգար, չիտափական կաներն էին Մակե-դարիայի գիտագիտների համար, — եղբարներ, անտարա-կարու, բայց ծանրաբարուի, հրամայական ժեստավոր, որոնք

պանել այդ դիմումները նոյնպիսի մի ցոյցով, որով դուք գոհացում ստացաք չորս տարի սրանից առաջ (շատ լաւ, շատ լաւ): Առաջարկում եմ ապահովել ձեզ մի այնպիսի ապագայից, որ դուք այժմ դեռ ևս կարող է ենոյս տալ ձեզնից, ինչպէս և մեզնից: (Ռուսն ծախանարութիւններ ծայր. ծախակովմ եւ աշակովմ):

օրէնքներ են թելադրում, հրամայում են մարտիկներ
համախմբել, հաւաքում են պաշար ու գրամ և չեն
հանդուրժում գիմադրութեան: Այսպէս որ խաղաղ
հայերը միաժամանակ տուժում են և թիւբքերից, որոնք
հարստահարում են նրանց և փեղայիններից, որոնք ուզում
են նրանց ազատել:

Ապստամբութիւնը ճնշելու համար, տաճիկ գորքերը
ապրիլի վերջերում հրաման ստացան շրջապատել Սա-
սունը, ապա նրանք մագլցելով բարձրացան լեռնալան-
չերը՝ դիմաւորելու համար ֆեդայիներին: Դուք լսեցիք
այդ անցքերի պատմութիւնը, որ ստացել է և որ ձեզ
արաւ յարգելի պ. Պրէսանսէ: Եեմ կարծում, թէ մեր
պաշտօնակիցը կամենայ երաշխաւոր կանգնել այդ պատ-
մութեան բացարձակ ճշգութեանը և չեմ կարծում, թէ
նա հակառակէ, որ նա աւելի թելադրւած է կրքից, —
դիւրին բացատրելի մի կրքից — քան թէ ճշգութեան
խնդամիտ մտահոգութիւնից:

(Վերջը յաջորդ անգամ)

ւադրութեամբ սպանեցին Շաւրօյին, կողոպտեցին փողն ու շորերը և դիակը նետեցին զօհ մէջ:

Կիսաճամբին ընկաւ երիտասարդը, գեռ չտեսած իրականացումը սիրած իդէալի: Ո՞րն էր այդ իդէալը, և ինչ զգացմունքներ էին պաշարել նրա միտքն ու սիրտը,— դա անպահով, բայց յուզելով խօսքելով՝ արտայայտած է այն կտակ ի մեջ, որ նա թողել է իր փոքրիկ զաւակի անունով... .

Սիրելի և սլաշտելի Յակովիկը !

ԹԱՅԻԼԱԳԼԻԱ ԱՂՋԻԱ!

„Վերջին անգամ քեզ իմ սրբազնի կտակն եմ անում:
Դու միշտ աչքի առաջ ունեցիլ, որ ես քեզ՝ քո զեթունցի
պապի, իմ հօր Յակովի անունն եմ առել: Քո պապը եւ քո
հայրը գնացին միևնույն ճանապարհով, եւ դու, իբրև ար-
ժանաւոր յաջորդ՝ պարտաւոր եւ նոյն ճանապարհով գնայ:
Սյդ ճանապարհը փշոտ է եւ գառն, այնտեղ երբէք վարդեր
չեն բուժնում: Քո պապը եւ հայրը երբէք վարդերի վրայով
չեն անցնել, այսպէս որ դու էլ չեն անցնի:

„Իբրև նուիրական յշշատակ՝ քեզ ու զարկում եմ, որպէս զի անպատճառ հաղնես այս չ էր ք է զ կ է ն, կապես հօրդ գօտին եւ այս մահացու սուրբն Ել վրագ կրես: Թող իմ հայրական օրնութիւնը քեզ վրայ լինի, թող այդ սրբազն գաշոյնը քո մէջ բոյբոքի լիմէմինդրութեան ազատարար թոյնը եւ գու կարողանաւ քո հօր վըէմը առնել: Ես գնում եմ մեռնելու եւ կտակում եմ քեզ անդին զաւա՛կս, որ գու նոյնպէս գնաս արիւնի եւ արասունի քի երկիրը, վրէմինդիմը լինես քո հօր, սպանուած մայրերի, բռնալրաբած անհամար քոյբերի պատեփ համար:

„Եթէ ես մեռնեմ և այլեւո չկարողանամ քեզ, սիրելի Յակոբիկո, տեսնել, այս երկասով կարծում եմ բատական է, որ դու ըստանես այն գործի սրբաթիւնը, ազատութեան այն ջերդ ու սուրբ փափակը, պիտի դու դիտակից կերպով պիտի վերաբեր իս և հօրդ վերջնի կամքը կատարես իսկ եթէ դու իմ արժանաւոր գտաւիլը պիտի չլինիս և քո բարօրութեան և եսի մասին խորհն՝ հէնց այմից անհժամ եմ քեզ. մող յաւիսանական ամօթը միայն պրօշմէ անսարժան որպէս ճակատին, որ չմեզ հօր խրապ:

Ես գնում եմ մեռնելու, վլխ առնելու, արտասուբներ սրբնելու, թողի իմ այց սրբազնի պատիքամը քո և անհական հոգու խորքը թափանցէ հենց այժմեռնից: Ես յօս ունեմ, որ իմ թանկագին գաւակը կը լինի այնպէս, ինչպէս որ եղել են իր հայրը և եւ պապը:

„Ե՞՞չ, սիրելի եւ պատական ամուսինս, քեզ վրայ նոյնպէս պարագանութիւն եւմ գնում՝ քո ոսկուն կրթել այնպէս, ինչպէս որ ես եւ պատգամիլ։ ԶԵ՞՞ս որ սո քեզ սիրում եմ, եթէ զու էլ ինձ սիրում ես (ես դան հաւասառում եմ), միիժառու ասյան ասինծ դարձրու իմ Յակոբիկին»

„Մնաք բարով, թող Սպառած օրհնի ձեզ եւ թող իմ ցանկութիւնները միայն ցանկութիւնն չմնան. Համբուրում եմ բոլորից».

„Իսկ Այծեմնիկիս կը ցանկայի, որ լինէր այնպիսի հերոսունիք, որպիսանին էր Տնիկ պարփռաների վրայից պատերազմող Այծեմնիկիր:

„Մամաք բարով, համբուրում եմ խորին կարօսվ բողոքիդ“:

Ձեր Մ. ՄԻՍԱՔԵԱՆ (ԳՈՒՐԳԵՆ ՊԱՆԱԳԻԵՑԻ)

24 յունիսը, 1904
Թաթլիզ

Ծննդեամբ կարսեցի էր Շաւրօն, կրթութիւնը ստացած նախ Գէորգեան ձեմարանում, որտեղից արձակւեց „Եմբոստութեան“ պատճառով, և ապա Ներսէսեան դրաբոցում: Վերջերս գիւղական գրագրի պաշտօն էր վարում Պարսի շրջանի մէջ և մասնակից էր Հայկական գատի Համար աշխատող շրջաններին: Սակայն գործունեութեան այդ ձեւը նրան բաւարարութիւն չտվեց, և նա որպէսց աւելի վճռ ական դեր խաղալ կուի երկիրը անցնել: Մտաւ թիւրքաց Հայաստան փոխարքութեան գործով բայց շատ չանցած՝ զոհ կնաց իր անզգուշութեան: — Նրան ուղեկցող երկու քիւրքեր՝ տմարդի դա-

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Բ Ե Ր

* *

Ամենայն հայոց կաթողիկոսի պատգամաւորութիւնը, որի վերաբերեալ մանրամասները Հաղորդւած են մեր հեռագիրների բաժնում, Պարիզում տեսակցութիւն ունեցաւ արտաքին գործերի մինիստր Դելկասէի հետ և ընդունեց հանրապետութեան նախագահ Լուրէի կողմից Պարիզից պատգամաւորութիւնը անցաւ Լօնդոն, ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ անգլիական արտաքին գործերի մինիստր Լանստառուի կողմից, և սպասում է Էդուարդ թագաւորի վերադարձին՝ նրան ներկայանալու համար Պատգամաւորները Լօնդոնից պիտի գնան Հոռմ:

*

Գրանսիական արտաքին գործերի մինիստրութեան ուղարկւած է 30 հազար ֆրանք, իր հիւպատոսարանի միջոցով Սասունի արկածեալներին բաժանելու համար: Նոյն նպատակով մինիստրութիւնը իր ձեռքի տակ ունի դարձեալ 5,000 ֆրանք: Մեզ հաղորդում են վստահելի աղքիրից, որ պ. Դելկասէ համաձայնել է գումարները հասցնել նպատակին:

*

Մեզ գրում են Կ ա ր ս ի ց.—

«Յուլիսի 22-ին, գիշերւայ ժամը $10\frac{1}{2}$ -ին, տէուօրի ենթարկեց կառավարչական աստիճանաւոր Վ ա ս ի լ Գ ր օ գ դ օ վ, որ վարում էր ժանդարմատի թարգմանի պաշտօն: Տէուօրիստը չէ ձերբակալւած: Մանրամասները յաջորդ նամակով»:

*

Հրավիտի ՝ Հայկական ինքնապաշտպանութեան կօմիտէն՝ հրասարակել է փինլանդական ժողովութիւն ուղղած մի շրջաբերական, որից առաջ ենք բերում մի քանի քաղաքացիներ.

«Ճնշւած հայ ժողովուրդը գոհունակութեան և ցնծութեան խորին զգացմունքով լսեց Փինլանդիայի կառավարի բորբիկովի, ուստահան բռնապետութեան վիճած այդ կատաղի դաշճի մահը:

«Ուստահան կառավարութիւնը բիրտ ու անարդ ձեռով ոտի տակ տւեց Փինլանդական մեծ ժողովուրդի, ինչպէս և իր բռնապետական բէժիմի տակ հեծող բոլոր ժողովուրդների քաղաքակրթական բարձր իրաւունքները:

Հայկական ինքնապաշտպանութեան կօմիտէն՝ իր ցաւակցութիւնը յայտնելով Փինլանդական ժողովուրդի ազատութեան համար զոհւած եւգենի Շառումանի մահւան առթիւ, համակւած է ցնծութեան զգացմունքով բռնապետութեան գարշելի ծառայի բորբիկովի վախճանից:

Հաւատում ենք, որ այսուհետեւ ևս Փինլանդիան՝ բարձր պահելով ազգային դրօշակը, անողորոշ ու արիաբար կը կռի իր կորցրած ազատութեան համար: Թող հպարտանայ Փինլանդիան իր զաւակներով, որոնք անձներաբար և ազնւութեամբ կռւում են հայրենիքի ազատութեան մեծ գաղափարի համար և թող նրա լաւագոյն քաղաքացիներից մէկի հերոսական մահը ոգեւորով օրինակ հանդիսանայ բոլոր ազնիւ մարդկանց համար:

Բազմազարչար հայ ժողովուրդը, որի քաղաքացիական ազատութիւնը ոչնչացած է ուստ բռնապետութեան կամայականութեամբ, որի ազգային-եկեղեցական սեփականութիւնը յափշտակւած է աւազակորէն, իսկ հանրութաւ և կրթական հաստատութիւնները աւերւած, հայակրութեան ու համերաշխութեան անկեղծ զգացմունքով ողջոյն է ուղարկում վիճակակից փինլանդացիներին:

«Ձեռք ձեռքի տանք, վիճակակից փինլանդացիներ:

«Բոլոր տառապող ժողովուրդների միացած ուժով ցոյց տանք ուղարկան բռնապետութեան, որ ձշմարտութեան, հաւասարութեան և արդարութեան լոյսը մօտ ապագայում պիտի տարածւի լայնածաւալ Ուստաստանի վրայ»:

*

Անդրկովկասեան քաղաքներից մէկում, ինչպէս մեզ տեղեկացնում են այստեղի ընկերները, ոստիկանութիւնը փորձում է կ ե լ ծ ե լ յեղափոխական կոմիտէների կնիքը, գաղաղնիքների իմանալու և հասարակութիւնը մոլորեցնելու նպատակով: Փաստը վերստուգւած է, և մեր շտապում ենք զգուշացնել թէ դաշնակցական մարմններին և թէ առհասարակ յեղափոխական բոլոր կազմակերպութիւններին, որոնք կարող են զոհ լինել ոստիկանական այդ նորաձեւ դաւին:

*

Հոկտեմբերի 3-ին Ամերիկայի Բօնտոն քաղաքում պէտք է բացւի Միջազգային Խաղաղութեան XLI կօնդրէսը, նախորդ տարիների նման՝ այս տարի ևս մի յատուկ պատգամաւորի միջոցով այդ կարկոր ժողովին պէտք է ներկայացվի հայկական խնդիրը և կռւող հայ ժողովուրդի պահանջը: Սէն-Լուի քաղաքում ես, ուր համաշխարհային ցուցահանդէսի առիթով տեղի պիտի ունենան կարեոր կօնդրէսներ, պիտի արծարծւի հայոց խնդիրը:

*

Ցունիսի 19-ից մեզ գրում են Մուշից:

«Կառավարութիւնը կը շարունակէ հալածել, բռնւած այն ահէն, թէ յեղափոխական շարժումը պիտի վերանորոգւի լեռներուն մէջ: Առանձին ուշք կը դարձի յեղափոխական խմբապետներու ոչնչացման գործին վրայ: Լուր կը պտտի, որ Վահան անհետացած է. Թիւրք իշխանութիւնը ամէն միջոց է գործ կը գնէ խսկութիւնը իմանալու: Անդրանիկի վիճակը հալածական է և աւելի դժւար քան առաջ, որովհետեւ տեղական իշխանութիւնը յատկապէս անոր ետևէն ընկած է»:

*

Միացեալ-նահանգների և Թիւրքիայի միջն ծագած միջազգայիշը, որ օգոստոսի սկզբներին քաղաքական փոթորկալի խնդրի կերպարանը էր ստացել, վերջացաւ անդրատանդեան հանրապետութեան կատարեալ յաշ-թանակով: Հէնց որ ամերիկական զրահաւորները երեացին թիւրքաց զրերում՝ պատրաստ ծովային մի ցոյց անելու, սուլթան Համբատ, այնքան յանդուգն թոյլերի դիմաց, անմիջապէս խոնարհեցրեց գլուխը և բաւարարութիւնը տւեց վճռական թշնամուն:

Ն Ի Ի Բ Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՄՑԵԱՆ ԲԻՒՐԾԱՆ Առաջած է

Ուստահանութիւնը կօմիտէից 14,000 ֆր., Մ. Ք.-ի Բարձրագայ լիւթ. 183. 5 ֆր. (50 ուրեմի), Դ. ա. կօմից 15,700 ֆրամի:

Ուստահանութիւնը կամաց առաջած է կամաց 15,700 ֆրամի և սուլթանի առաջած է կամաց 15,700 ֆրամի:

Ամերիկայի կամաց 15,700 ֆրամի առաջած է կամաց 15,700 ֆրամի:

Հայոց առաջած է կամաց 15,700 ֆրամի:

Վարչապետական կամաց 15,700 ֆրամի:

Հայոց առաջած է կամաց 15,700 ֆրամի:

I. Պատասխան. մարմին (ՈՒ-ի Ա. Ա.)

ՎԻԾԱՊԵՆ՝

Կացին 7 գամեկան 20 փարա, Կամք լւ. 40 զահ, Կացին
5, Կամք լւ. 50, Հրձիք 20, Հիմրայ 20, Համակրող 47, Աշոտ
Երկաթ 5, Սնիվուն 10, Զան 10, Մօլի 5, օր. Ա.-Էն 162, Կամք
148, Փառաս 5, Վրէծ 10, Կացին 5, Հրաբուն 15, Քէրէ 51,
օր. Աւանունի 20, Ուսու Գերճակ 168, Սնիվուն 80, Համք 20, Մըհէ
20, Փարակ 10, Վրէծ Խոր. 40, Կայծակ 10, Ուժանսկ 20,
Փարճատ 5 զահ: Գումար 844 զամեկան 20 փարա:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԵՆ՝

Վասնայի կօմիտէն - Տարօն խմբ. (մարտ ապրիլ) 28 մվ,
Հայրիկ խմբ. (մարտ-ապրիլ) 20, Ծաշունցի խմբ. (ապրիլ-մայիս)
18, Ենկերական ինչոյցի մէջ, Գրգոյի «Հա եմ» եռա երգի առթիւ
հանգանակւած 103, Հրատ-Կամարի միջոցաւ Պուրևազ Մ. 8.
60, Ո. մեծիկենաչ 10, Տօպրիչի ինթակոմիտէն 29, Ապրդոյի
միջոցաւ Փելքա. պարոնչ մը 160 ոսկի ֆրանք:

Ս Ե Ւ Վ Ե Ն ի ենթակօմիտէն յունաք-վենոր-մարտ) Ստրալճա կայարանի Արարատ Խմբ. 54 ԵՎ, Նէր ընկեր Խաչիկ Թոհոնաֆ- ծեանէ 65, Սլիվէնի Վասպուրական Խմբ. 17. 40, Ստրալճայի Արարո Խ. 13, Քէրմէնի կայարանի Անդրամիկ Խ. 30, Սլիվէնի Վասպուր. Խմբ. վիժականանութենէ 40, Ստրալճա կայարանի Սերոբ-Աղքափը Խ. 66. 80, Նոր կայարանէն հանգանակ. Դողչանի Ֆեոդով 47. 70, Սլիվէնի կանանց „Արաքս“ ընկերութ. 70 ԵՎ:

Տ. Վաղինակ Տօր ծեղոցի ի նստատ երկիր կուտներու՝ Կ այ ա-
ր ան է Ռ. Մահալէ 114 լվ, Գարապոնար 86. 80, Գայամբռ
եւ Հասքէոյ 42, Քէրմէնլի 25. 10, Գարնուպատ 58. 50, Եամզօլ
25. 30 լվէ Գումար 361 լվ 50 սանդիմ:

Ու լ ս ա ն ու ր ի կոմիտեն. ճուրծօվայի մէջ հանգանակած Ուկի Թորոսիանի եւ Արթամէս Փափազեանի մեջոցաւ՝ Եռվ. մարտիրոսան 20 ՀՀՎ, Գր. Դարակէօգ. 20, Պետո 16, Մանուկ Խաչը. (միջ) 20, Խաչը 10, Ապրօ 5, Նիկողոս 5, Կոստանդին 4, Սախօ 1, Ղարդօ 5, Քէշիվան 5, Պետրոս Կարապետ. 5, Ղարդան Նազար. 2, Թովի. մարտիրոս. 2, Մկրտիչ Տափէր. 7, Եարութիւն Սարգս. 1, Խաչիկ Թովման. 1, Մկրտիչ Ստեփան. 3, Ղազար Պողոս. 2, Յովհան. Ղազար. 2, Արթին Պետրոս. 2, Ուկան Պետրոս. 5, Ֆեգան Սարգս. 5, Եարութիւն մարգար. 20, Երանոս մանուկ. 1, Տիմիթիր (յոյն) 2, Երանոս Պողոս. 4, Խաչար Թորոս. 2, Պողոս Կարապետ. 2, Համբ Ժերութ. 2, Ներսէս մելքոն. Եղարք 4, Յովսիկմ 0, 50, Աւետիս Գրիգոր. 2, Սահակ մանուկ. 2, Սարգս Սարքսան 2, Խաչիկ Ղազար. 5, Կուկաս Պողոս. 5, Մելքոն Պալտիկ. 2, Մանուկ Շափի 2, Հազր Հէմօ. 2, Միքայէլ Յար. 6, Արիւծ Արծ. 10, Յակոբ Եռվ. 2, Գալրոս մինսա. 3, Պողոս Գէորգ. 5, Զատիկ Էմմիլ 1, Համբ Գուրգէթ թ, Մուրատ Կիրօ. 2, Հրանտ Տիմիթի 5, Ըսկերակից մը 5, Մամիթար Ղազար. 2, Ոսկի Թո-րոսիսն եւ Վրունէս Փափազեան 8 թու. Գր. Անն 247 թու. 50 աստի-նութիւն անձնագիր է առ լ ս ա ն ու ր ի կոմիտեն.

համ Վարդ, Յարութիւն Սարգ, Կարապետ Մկրտի, Մկրտիչ
Մուրատ, Մլիթիար Ցովհ, Նրուանդ Տօնիկ, Յակոբ Էրանու,
Ժառուկ Հորշուա, Մկրտիչ Յարութ, Վ. Շահ, Ստեփան Հլիպաթ,
Սարգս Պաղոսա, Մարտիրոս Աբրահամ, Մանուկ Սուրիսա,
Մովսէս Արա, Գայապար Առաքել, Մուրաս Թոր, Միհակ Սուլթթ,
Պետրոս Տենիթը, Ուս թի 7, Յարութիւն Վարդապետ, Մարտիրի
Գևորգ, Մանուկ Աւետիս, Արքանամ Գայլուստ, Խաչիկ Աստուր,
Յարութիւն Զավուշ, Գրիգոր մանուկ, Էրան Սպիտի, Սալպար
Սրապ, Հայո մանուկ, Աւազ Յոհանն, Մովսէս Սոլիկ, Յա-
րութիւն Դամինէլ, Լևոն Հովիկ, Գէրոզ մանուկ, Ա. Բ. Գ.,
Դ. Ե. Զ. Զ. 5-ական, Հլիպատ Մարտիր, Կուլո Մովս, Շահին Գրիգ,
Գաբրիէլ Թումաս, Մանուկ Ղազ. 4-ական, Աստուր Յակոբ,
Մարտիր Աղասան, Օսկիան Աղասան, Գրիգոր Խրամ, Ուս-
Օսմաննէս Հովիկ, Ղազար Հրօյ, Ուս թի 2, Ուս թի 5, Ուս
թի 4 Յ-ական, Յակոբ Գրիգոր, 2. 50, Ուս ժ. 2. 50, Պողոս
Մկրտչ, Հայաստանի ծնծոյւկ, Երկաթագործ, Մանուկ Կարապ,
Հրանդ, Մկրտիչ Տօնապ, Թորոս Ալեքս, Յակոբ Թորոս, Մար-
տիրս Վանցի, Խաչիկ Շահին, Օսմաննէս Կարապետ, Սարգիս
Ալարդ, Մովսիս Կարապետ, Խաչատոր, Քերովիչ Պանիիլ,
Թորոս Հովար. 2-ական, Համբարձում Օսման. 1. 40, Արմենակ
Սիլոն, Յարութիւն Էօրծէծ, Երեմիս Փէնչ, Օսմաննէս Տէմիթ,
Տօնիկ Մարկ, Մուրատ Թումաս, Կարապետ Յարութ. 1-ական լիլ
Գումար 1508 լիլ և 85 սանտիմ:

Սուլինայի գինոր. երեք խմբերէ. 1903 նոյեմբ. 10-ին. --

„Ծրագիւ Խմբէն” Խոսրով 6 Քրամաք, Հայկ 7, Արութ 10, Շմանն 10, Սեպուհ 5, Կարո 5, Ալեքսան 1, 50, Տարտար 5, Օռոքէն 5, Քար 2 ֆր. „Դայլ” Խմբէն” Գորգէն, Գազարով Արամ, Գարեգին, Ասպետ 5-ական, Արծուն 2 ֆր., Արծունի 8, Օնիկի 2, Տաղօնին 2 ֆր.: „Արևարան” Խմբէն” Հավելս, Թաթուլէ, Պարզեալ Անհրաժ, Կարմիր 5-ական ֆր. Վաճրին, Բարեհիք, Ճարագ Անդէն 2-ական: Գորսար 116 Քրամաք 50 սամստիմ:

„Պազգէնս“ խումը՝ ծրկաթ, Գայլ Արիւծ, Անդրանիկ, Հրա-
1-ական Փր., „ԶԵՂԹՈՒՆ“ խումը՝ Կարիք 5. Փր., Ստ. Եղիսանեան
Գայլ, Սէրվարը. 4-ական, Ն. Խաչման., 9. Գէռըր., 8. Կիլակոս
3-ական, Երկաթ, Ս. Յակոր, Զայն 2-ական, Ն. Միրուն., ՏԼ.
Դագարեան, Արծի, Կամարակապ, Ա. Ն., Պարոր 1-ական Փր.
„Անդրանիկ“ խումը՝ Արտաշ 3 Փր., Զաքար 3, Ալեքսան Պ. 2
9. Պէնգի, Լևոն, Հրանդ, Յակոր 1-ական Փր.: „Նէփուզ խումը
Մհճ-Աղար 10 Փր., Ե. Մ., Օ. Մ., Պ. Խըբչուէր, Արշակունի
Հայի 5-ական, Պոլղոտանեան 4, Երկու մնկիքներ, Պ. Խովհաննէր
Պ. Արարատ, Դրիգոր 3-ական Փր., „Փէղային“ խումը՝ Ալ. Դրի-
գորեան 1 Փր., 8. Ամէմեան 3, Պ. Նշան 2, Միքայէլ Մինաս
2, Սար Դրիգորեան 1, 9.ր. Առաքելուն 4, Սուր 3, Մ. Սահ-
մանեան 4. Միջ. Յանուարին 4 դրանու:

III B&H 10/1995

ՀՅԱՅԻ ԵՐԵՎԱՆԻ ԱՊՈՒՐՔԻ 1904 թ.
Մատուցած նմբ. 119 սուրբի. 57, Խեմուռա նմբ. 140, 40, Ապիճ
նմբ. 225, Գիշակ նմբ. 57, Խոնամատար նմբ. 252, 50, Նոր նմբ
123, Տամակ նմբ. 66, 50, Կայսակ նմբ. 50, Եւս 50, Եւս 43,
Եւս 39 սուրբի Գումար 1165 սուրբի 40 խոփի:

ԵԵՐ ԽԱՄԲԱԳՐՈՎԹԵԱՆ ՀԱՍՑԵՆ

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)